USAID FROM THE AMERICAN PEOPLE

International Foundation for Electoral Systems

ცესკო
საქართველოს
საარჩევნო
ადმინისტრაცია

საარჩევნო სისტემების
განვითარების, რეფორმებისა და
სწავლების ცენტრი

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀՐԱՀԱՆԳ

Նախատեսված է այն ընտրատեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ

Սակրեբուլոյի միջանկյալ
ընտրություններ – 2023 թվականի ապրիլի 29

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀՐԱՀԱՆԳ

Նախատեսված է այն ընտրատեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ

Սակրեբուլոյի միջանկյալ
ընտրություններ – 2023 թվականի ապրիլի 29

Հաստատված է ԿԸՀ-ի 2023 թվականի փետրվարի 27-ի N28/2023 որոշումով

Ներկայացված օժանդակ ուղեցույցը պատրաստվել է 2023 թվականի ապրիլի 29-ին կայանալիք սակրեբուլոյի միջանկյալ ընտրությունների համար և նախատեսված է այն ընտրական տեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ: Օժանդակ ձեռնարկը կազմվել է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» և «Քվեարկությունն էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացնելու կարգի և պայմանների սահմանման մասին» ԿԸՀ-ի 2023 թվականի փետրվարի 6-ի N7/2023 որոշման հիման վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների և գործունեության կարգի հետ կապված օրենսդրական կարգավորումներին ամբողջական տեսքով ծանոթանալու համար տեսե՛ք «Վրաստանի ընտրական օրենսգիրք» օրգանական օրենքը և ԿԸՀ-ի համապատասխան իրավական ակտերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ 5

Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը և լիազորությունները 6

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորումը և լիազորությունների ժամկետը 6
Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդհանուր լիազորությունները և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կարգապահական պատասխանատվության միջոցները 7

Գլուխ II. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության կարգը 10

ՄԱՍ II. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 12

Գլուխ I. Ընտրողների ցուցակներ 13
Ընտրողների միասնական ցուցակը և նրա հրապարակման կարգը 13
Ընտրողների միասնական ցուցակի տվյալների վերստուգումը 13
Ընտրողների հատուկ ցուցակ 14
Անվասայլակից օգտվող ընտրողի մասնակցության ժամանակավոր կարգը 14
Շրջիկ քվեատուփի ցուցակի ձևավորման կարգը և շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամների որոշումը 15
Ընտրողի թերթիկ 19

Գլուխ II. Ընտրական փաստաթղթերի ստացումը, քվեարկության շենքի կազմակերպումը 20
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի, քվեարկության համար անհրաժեշտ պարագաների և նյութերի ստացումը 20
Ընտրական փաստաթղթերի, անհրաժեշտ պարագաների և նյութերի հանձնման-ընդունման ակտը 22
Քվեարկության շենքի կահավորումը 23

ՄԱՍ III. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ 25

Գլուխ I. Ընտրական տեղամասը բացելը, մինչև քվեարկությունն սկսելն անցկացվելիք ընթացակարգերը 26
Ընտրական տեղամասը բացելը 26
Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք 26
Դիտորդի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի և զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչի իրավական վիճակը 27
Ընտրական տեղամասը բացվելուց մինչև քվեարկությունը սկսվելն անցկացվելիք ընթացակարգերը 28

Գլուխ II. Քվեարկության գործընթացը 35
Քվեարկության անցկացումը 35
Քվեարկության գործընթացը շարունակելը առանց էլեկտրոնային միջոցների օգտագործման 40
«Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից քվեարկության ընթացակարգը 44
Քվեարկության օրը կարգուկանոնի պահպանումը քվեարկության շենքում և նրա հարակից տարածքում 44
Քվեարկության գործընթացի ժամանակավոր ընդհատումը 45
Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկումը 45
Քվեարկությանը մասնակցած ընտրողների հաշվառումը 48

Գլուխ III. Ընտրական տեղամասը փակելը, քվեարկության արդյունքների ամփոփումը 49
Ընտրական տեղամասը փակելը 49
Շրջիկ քվեատուփը բացելը 50
Տեղեկատվություն նախնական արդյունքների մասին 51
Ընտրական տեղամասի կազմակերպումը ձայները հաշվելու գործընթացի համար և մինչև քվեատուփը բացելն անցկացվելիք ընթացակարգերը 52
Ընտրողների ցուցակների, փաստված և չօգտագործված քվեաթերթիկների կնքումը 53
Հիմական քվեատուփը բացելը 54

Քվեաթերթիկների տեսակավորումը/հաշվելը/կնքումը 54
Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը 56
Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության հրապարակայնությունը 58
Գրանցամատյանը փակելը, քվեարկության օրվա գործավարության մատյանի կապարակնքումը, ընտրական փաստաթղթերի փոխանցումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին 59

ՄԱՍ IV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ/ԲՈՂՈՔՆԵՐԸ 61

Գլուխ I. Քվեարկության օրվա դիմումների/բողոքների գրանցումը 62
Քվեարկության օրվա դիմումներում/բողոքներում անճշտությունների որոշման կարգը 62

Գլուխ II. Քվեարկության օրվա դիմումներին/բողոքներին արձագանքումը 64

Հավելված №1 Տեղեկանք դիմումը/բողոքը տեղամասային ընտրական հանձնաժողովում գրանցելու վերաբերյալ 65
Հավելված №2 Տեղամասային ընտրական հանձնաժողով ներկայացվելիք դիմումի/ բողոքի վավերապայմանները 66

ՄԱՍ I

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ I.

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը բաղկացած է 17 անդամից.

- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովի 8 անդամի, այդ թվում նաև տվյալ տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց (հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար) ընտրում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը,
- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովի 9 անդամի «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքի 196[1] հոդվածի համաձայն նշանակում են համապատասխան կուսակցությունները[1]։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Կուսակցությունն իրավունք ունի որոշում կայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին ետ կանչելու և նրան փոխարինող նշանակելու մասին, որը կներկայացվի համապատասխան տեղամասային և վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։ Բացի այդ, արգելվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին ետ կանչել քվեարկության օրվան նախորդող վերջին 20 օրվա ընթացքում (9-28 ապրիլի), քվեարկության օրը (29 ապրիլի) և քվեարկության օրվան հաջորդող օրը (30 ապրիլի)։

Նորաստեղծ տեղամասային ընտրական հանձնաժողովը սկսում է գործել և նրա անդամների լիազորության ժամկետը սկսվում է ընտրություններից 30 օր առաջ (29 մարտի) և դադարում համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելուն պես։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը միևնույն ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ են։ Նշված ղեկավար անձանց լիազորությունների դադարումը միևնույն ժամանակ հանգեցնում է տեղամասային ընտրական հանձնաժողովում նրանց անդամության դադարեցման։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու է, ըստ անհրաժեշտության, շրջիկ քվեատուփը տեղափոխելու, ընտրողների թերթիկները բաժանելու և այլ գործառույթներ կատարելու նպատակով կարգադրությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովում ավելացնել հատուկ խմբի/հատուկ խմբերի 2-2 անդամ և մրցույթով ընտրել նշված հատուկ խմբի անդամներին։

1. Կ/մ «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան», կ/մ «Գիորգի Վաշաձե – Ռազմավարություն Աղմաշենեբելի», կ/մ «Վրաստանի եվրոպական ժողովրդավարներ», կ/մ «Գիրչի», քկմ «Ալեկո Էլիսաշվիլի – քաղաքացիներ», կ/մ «Միասնական ազգային շարժում», կ/մ «Եվրոպական սոցիալիստներ»։

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող/ընտրող սուբյեկտի ներկայացուցիչը չէ: Նա իր գործունեության մեջ ազատ է և ենթարկվում է միայն Վրաստանի Սահմանադրությանը, Օրենքին և համապատասխան ենթաօրենսդրական ակտերին: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին արգելվում է նախընտրական քարոզչություն վարել և մասնակցել ընտրական քարոզչությանը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում.

- ✔ ընտրական տեղամասի տարածքում ապահովում է ընտրությունների անցկացումը, Վրաստանի ընտրական օրենսդրության կատարումը, քվեարկության ժամանակ Վրաստանի ընտրական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի պահպանումը,
- ✔ ապահովում է ընտրողների, ներկայացուցիչների և դիտորդների Վրաստանի Սահմանադրությամբ և «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով երաշխավորված իրավունքների կիրառում և պաշտպանություն,
- ✔ ստուգում է ընտրողների ցուցակների ճշգրտությունը, քննարկում ցուցակների հետ կապված առարկությունները և սխալներ կամ անճշտություններ հայտնաբերելու դեպքում ոչ ուշ, քան հաջորդ օրը, ցուցակներում փոփոխություններ կատարելու առաջարկով դիմում է վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- ✔ ընտրողներին բաժանում է ընտրողների թերթիկներ,
- ✔ ընտրողների դիմումների և հայտերի հիման վրա սահմանում է շրջիկ քվեատուփի ցուցակը,
- ✔ պատասխանատու է ընտրական տեղամասում Վրաստանի ընտրական օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության հրապարակման համար, այն տեղի պատշաճ կերպով նախապատրաստման համար, որտեղ անցկացվում է քվեարկությունը և հաշվում են քվեաթերթիկները,
- ✔ ապահովում է ընտրական տեղամասում կարգուկանոնի պահպանումը,
- ✔ չեղարկում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը՝ քվեարկության շենքը ժամանակավորապես փակելու, քվեարկությունն ընդհատելու, փակելուց հետո շենքը բացելու, քվեարկությունը շարունակելու մասին,
- ✔ որոշում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները, ինչի վերաբերյալ կազմվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն,
- ✔ քվեարկության օրը քննարկում է ընտրությունների ընթացքի և քվեարկության նախապատրաստման հետ կապված դիմումներն ու բողոքները և կայացնում համապատասխան որոշում,
- ✔ իրավասու է ամբողջական կազմի մեծամասնության որոշումով վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու հարցը,
- ✔ իրականացնում է Վրաստանի ընտրական օրենսդրությամբ վերապահված այլ լիազորություններ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովում կատարում է լրիվ վարչական գործառույթներ,
- ✔ հրավիրում է և վարում հանձնաժողովի նիստը,
- ✔ ընտրական հանձնաժողովի աշխատանքին խանգարելու և կարգը խախտելու դեպքում կարգադրությամբ որոշում է ընդունում խախտողին վարչության շենքից վտարման հարցի վերաբերյալ,
- ✔ ընդունում է և բաշխում հանձնաժողովի մտից ընտրական փաստաթղթերը և գրագրությունը,

- ✔ անձամբ է պատասխանատու ընտրական փաստաթղթերի և գույքի պահպանման/տրամադրման համար,
- ✔ ընտրական վարչության կանոնակարգին համապատասխան, հանձնարարություն է տալիս հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին և հանձնաժողովի այլ անդամների,
- ✔ կազմակերպում է հանձնաժողովի անդամների միջև գործառույթների վիճակահանությամբ բաշխումը,
- ✔ պատասխանատու է ընտրական տեղամասի շենքում կարգուկանոնի պահպանման համար,
- ✔ պարտավոր է արգելել մուտքը քվեարկության շենք՝ այստեղ գտնվելու իրավունք ունեցող այն անձանց, ովքեր չունեն համապատասխան կրծքանշանը,
- ✔ քվեարկության արդյունքներն ամփոփելուն պես, վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին է փոխանցում բոլոր տեսակի ընտրական փաստաթղթերը,
- ✔ ըստ անհրաժեշտության. տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին ցուցում է տալիս կազմել գրավոր բացատրագիր,
- ✔ իրականացնում է Վրաստանի ընտրական օրենսդրությամբ շնորհված այլ լիազորություններ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը.

- ✔ կատարում է հանձնաժողովի նախագահի պարտականությունը, եթե հանձնաժողովը չունի նախագահ, կամ նա չի կարող կատարել իր պարտականությունը,
- ✔ հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ իրականացնում է հանձնաժողովի նախագահի որոշակի լիազորություններ (կարգադրությամբ ճշգրիտ կերպով պետք է սահմանվեն շնորհված լիազորությունների շրջանակները և ժամկետը):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալն ապահովում է.

- ✔ քվեատուփի և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի վերահսկում և հատուկ շրջանակ-ծրարների օգտագործում ըստ նշանակության,
- ✔ համապատասխան ձևաթղթի լրացում էլեկտրոնային միջոցներով անցկացված քվեարկության աուդիտը հաստատելու նպատակով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը.

- ✔ պատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգը և կարգադրությունների նախագծերը,
- ✔ պատասխանատու է հանրային տեղեկատվության տրամադրման համար,
- ✔ կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, այդ թվում՝ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը,
- ✔ իրականացնում է ընտրական օրենսդրությամբ շնորհված այլ լիազորություններ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է.

- ✔ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել հանձնաժողովի գործունեությանը,
- ✔ մասնակցել և ներկա գտնվել հանձնաժողովի անդամների որակավորման բարձրացման դասընթացներին և թրեյնինգներին/աշխատաժողովներին,
- ✔ ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին և մասնակցել հանձնաժողովի կողմից իրականացվելիք ընտրական միջոցառումներին,
- ✔ նիստից հարգելի պատճառով բացակայելու դեպքում այդ մասին տեղեկացնել հանձնաժողովի նախագահի տեղակալին կամ հանձնաժողովի քարտուղարին,
- ✔ գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեարկության նախորդ օրը, քվեարկության օրը և քվեարկության հաջորդ օրը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ,

- ✔ ժամանակին կատարել հանձնաժողովի նախագահի կողմից հանձնարարված պարտականությունները։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կարգապահական խախտումներն են.

- ✔ պաշտոնական պարտականությունները հանցավոր չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
- ✔ Վրաստանի ընտրական վարչակազմին գույքային վնաս պատճառելը կամ նման վնասի առաջացման վտանգը մեղավոր կերպով ստեղծելը,
- ✔ անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը,
- ✔ անհարգելի պատճառով 3 անգամ անընդմեջ համապատասխան ընտրական հանձնաժողովի նիստից բացակայելը,
- ✔ Վրաստանի ընտրական օրենսդրության և համապատասխան ընտրական հանձնաժողովի կանոնակարգը կոպիտ խախտելը,
- ✔ քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության պարտադիր ստորագրումից հրաժարվելը,
- ✔ Վրաստանի ընտրական վարչակազմի/Ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացներին անհարգելի պատճառներով չներկայանալը,
- ✔ էթիկայի նորմերի, վարքագծի ընդհանուր կանոնների անտեսումը կամ խախտումը՝ ուղղված պաշտոնատար անձի և Վրաստանի ընտրական վարչակազմի վարկաբեկմանը՝ անկախ նրանից՝ դա կատարվել է աշխատավայրում, թե աշխատանքից դուրս։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Կարգապահական խախտումների համար համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների նկատմամբ կարող է կիրառել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցները.

- ✔ դիտողություն,
- ✔ նախազգուշացում,
- ✔ պաշտոնական վարձատրության/պաշտոնական վարձատրության մասի պահում,
- ✔ լիազորությունների վաղաժամկետ դադարեցում (բացառությամբ կուսակցությունների կողմից նշանակված անդամի)։

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում կուսակցությունների կողմից նշանակված անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են դատարանի որոշումով, բացառությամբ կուսակցության կողմից ընտրական հանձնաժողովի անդամի ետկանչի դեպքի։

ԳԼՈՒԽ II.

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հանձնաժողովում վարում են գրանցամատյան, որը վարելու համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը, իսկ հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ տեղամասային հանձնաժողովի անդամներից որևէ մեկը (հանձնաժողովի իրավազոր անձ)։

Հանձնաժողովի իրավազոր անձը, հանձնաժողովում ընտրական փաստաթղթերի, դիմումների, բողոքների ընդունումը, տրամադրումը և դրանց հաշվառումն ու գրանցումը իրականացնում է աշխատանքային օրվա ժամը 10-ից մինչև ժամը 18-ը, բացառությամբ քվեարկության օրվա։ Գրանցամատյանը բաղկացած է երկու մասից. հանձնաժողովի մտից և ելից փաստաթղթեր։

I. Մտից փաստաթղթեր

Հանձնաժողովի իրավազոր անձը պարտավոր է հանձնաժողովի մտից փաստաթղթերը (դիմում, բողոք, տեղեկանք) անհապաղ կերպով գրանցել մատյանում, որտեղ չընդհատվող հաջորդականությամբ հաշվառում է դրանք՝ ըստ դրանց մտից հերթականության։ Յուրաքանչյուր փաստաթղթի շնորհվում է համապատասխան համար։ Գրանցամատյանում մուտքագրվում է դրանց մտից ամսաթիվը և թերթերի թիվը։ Հանձնաժողովի իրավազոր անձը պարտավոր է գրանցամատյանում նշել դիմումատուի/բողոքարկողի ինքնությունը, ինչպես նաև՝ այլ լրացուցիչ տեղեկություններ։ Գրանցամատյանում գրանցված բոլոր փաստաթղթերը հանձնաժողովի իրավազոր անձը ներկայացնում է հանձնաժողովի նախագահին։

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Փաստաթուղթը/դիմումը ընդունելուց և գրանցամատյանում համապատասխանաբար գրանցելուց հետո, հանձնաժողովի իրավազոր անձը պարտավոր է դիմումատուին/բողոքարկողին տրամադրել գրավոր տեղեկանք (տե՛ս՝ Հավելված N2), որում նշվում է դիմումի/բողոքի ընդունման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և ճշգրիտ ժամանակը, ինչպես նաև՝ մատյանում դրան շնորհված գրանցման համարը։ Տվյալ տեղեկանքը հանձնաժողովի իրավազոր անձը պետք է վավերացնի ստորագրությամբ։

II. Ելից փաստաթղթեր

Հանձնաժողովի իրավազոր անձը պարտավոր է փաստաթղթի տրամադրումը գրանցել գրանցամատյանի ելից փաստաթղթերի բաժնում։ Հանձնաժողովից որևէ փաստաթուղթ ստանալը դիմումատուն/բողոքարկողը գրանցամատյանում ստորագրությամբ վավերացնում է, որտեղ հանձնաժողովի իրավազոր անձն անում է գրություն. «Փաստաթուղթը տրված է» և նշում է ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ճշգրիտ ժամանակը։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների մասին տեղեկատվությունը և ընտրական փաստաթղթերի տրամադրումը տեղի է ունենում դրանք պահանջելուց հետո 2-օրյա ժամկետում, իսկ եթե տվյալ տեղեկատվության տրամադրումն ավել ժամանակ է պահանջում՝ Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված կարգով (բացառությամբ այն իրավական ակտերի, որոնց բողոքարկման ժամկետը սահմանված է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքի 77-րդ հոդվածով)։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի նախագահի կարգադրությունը և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության պատճենները պահանջելու դեպքում, տրամադրվում են անհապաղորեն:

Գրանցամատյանը փակվում է յուրաքանչյուր օրվա ժամը 18-ին, բացառությամբ քվեարկության օրվա: Գրանցամատյանի երկու մասերում էլ, վերջին գրանցումից հետո, գրվում է՝ «Գրանցամատյանը փակված է» և նշվում է փակման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և ճշգրիտ ժամանակը: Այս նշումը հանձնաժողովի իրավազոր անձը վավերացնում է ստորագրությամբ: Գրանցամատյանը փակելուց հետո արգելվում է նույն ամսաթվով լրացուցիչ գրանցել որևէ փաստաթուղթ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում դիմումների, բողոքների ընդունումը և դրանց հաշվառումն ու գրանցումն իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Քվեարկության օրը գրանցամատյանը վարում են ողջ ընտրական գործընթացին զուգահեռ: Քվեարկության օրվա բոլոր ընթացակարգերն ավարտվելուց և համապատասխան ընտրական փաստաթղթերի գրանցումից հետո գրանցամատյանը փակվում է հանձնաժողովի քարտուղարի և նախագահի ստորագրություններով և վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով:

ՄԱՍ II

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ I.

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրությունների օրվանից 30 օր առաջ փոխանցվում է ԿԸՀ-ի կողմից վավերացված ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ**
> Ընտրողների ցուցակները դրանք փոխանցելուց ոչ ուշ, քան հաջորդ օրը փակցվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի և քվեարկության շենքերում աչքի ընկնող տեղում: Ցուցակների հետ պետք է փակցվի ցուցակների հետ կապված բողոքի ներկայացման կարգը: Այս պահանջը չկատարելու դեպքում պատասխանատվությունը կրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովին մինչև քվեարկությունը, ոչ ուշ, քան երկու օր առաջ (27 ապրիլի) փոխանցվում են վերջնական, ճշգրտված ցուցակների հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակները (պատին փակցնելու ցուցակ, առանց լուսանկարների), իսկ քվեարկությունից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ՝ ընտրական հանձնաժողովի համար հատկացված ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները (սեղանին դնելու ցուցակ՝ լուսանկարներով), ինչպես նաև ընտրողների ստուգման սարքը/սարքերը, որոնցում ներբեռնված են համապատասխան ընտրատեղամասի ընտրական հանձնաժողովի համար նախատեսված ընտրողների ցուցակները (ցուցակը՝ լուսանկարներով):

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ**
> Պատին փակցնելու ցուցակի նախնական տարբերակը պետք է հանվի և նույն տեղում փակցվի ճշգրտված տարբերակը:
>
> Թույլ չի տրվում, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը սեղանի համար հատկացված ընտրողների ցուցակի տպագիր տարբերակը և դրա պատճենը դուրս տանի, ստուգման սարքի/սարքերի մեջ ներբեռնված ընտրողների ցուցակում եղած տվյալները, ինչպես նաև ընտրողների սեղանի համար հատկացված ցուցակի մեջ առկա տվյալները մշակել (այդ թվում լուսանկարել, հավաքագրել, գրել, պահել), օգտագործել, հրապարակել, փոխանցել կամ/և տարածել, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործողությունների իրականացումը պարտադիր է Ընտրական օրենսգրքով և ԿԸԿ-ի իրավական ակտերով նախատեսված տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը.

- ✔ ստուգում է ընտրողների միասնական ցուցակի ճշգրտությունը և սխալների կամ անճշտությունների հայտնաբերման դեպքում, ոչ ուշ, քան հաջորդ օրը, սակայն ոչ ուշ, քան ընտրությունների օրվանից 18 օր առաջ (11 ապրիլի), ցուցակում փոփոխություն ընդգրկելու մասին առաջարկով դիմում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- ✔ ընտրողների ցուցակների հետ կապված մտից դիմումներն (կցված փաստաթղթերով՝ այսպիսինի գոյության դեպքում) անհապաղորեն փոխանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԱԿ

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 8 օր առաջ (21 ապրիլի) կազմում է և կարգադրությամբ հաստատում ընտրողների հատուկ ցուցակը: Հատուկ ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը անհապաղ փոխանցվում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին, իսկ ընտրական հանձնաժողովի համար հատկացված տարբերակը (սեղանի ցուցակը) տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցվում է ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 12 ժամ առաջ: Ընտրողների հատուկ ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը) փակցվում է քվեարկության շենքում աչքի ընկնող տեղում:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցում է նաև տեղեկատվություն ընտրական վարչության այն պետական պաշտոնյաների մասին, որոնք ընտրական հանձնաժողովներում գործունեության պատճառով քվեարկության օրը չեն կարող ընտրություններին մասնակցել ըստ իրենց գրանցման վայրի և ընդգրկված են այլ ընտրական տեղամասի հատուկ ցուցակում: Այս դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրողների միասնական ցուցակում նրա ազգանվան երկայնքով, «փաստացի դրություն» սյունակում պետք է անի գրառում «հանձնաժողովի անդամ է»:

Եթե քվեարկության օրը, ընտրություններին մասնակցելու պահանջով, տեղամասային ընտրական հանձնաժողովին դիմում է ընտրող, որն ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 18 օր առաջ (11 ապրիլի) չի հասցրել դիմել հանձնաժողովին՝ ցուցակում հաշվառման պահանջով (ժամանել է արտասահմանից, դուրս է գրվել ստացիոնար բուժհաստատությունից, ազատվել է ազատազրկման հիմնարկությունից), համապատասխան փաստաթղթերի (սահմանի հատման մասին գրառում անձնագրում, տեղեկանք ստացիոնար բուժհաստատությունից, տեղեկանք ազատազրկման հիմնարկությունից ազատվելու վերաբերյալ) ներկայացման դեպքում նրան հատուկ ցուցակում կգրանցի տեղամասային ընտրական հանձնաժողովը և ընտրողների ցուցակին կկցի ներկայացված փաստաթղթերի ֆոտոպատճենները:

Այն դեպքում, եթե ընտրողի կողմից ներկայացված Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականում/անձնագրում չի նշված գրանցման հասցեն, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կապվում է ԿԸՀ-ի թեժ գծի հետ:

ԱՆՎԱՍԱՅԼԱԿԻՑ ՕԳՏՎՈՂ ԸՆՏՐՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳԸ

Անվասայլակից օգտվող ընտրողն իրավազոր է.

- ✔ Վրաստանի Խորհրդարանի միջանկյալ ընտրություններին և մունիցիպալիտետի քաղաքապետի արտահերթ ընտրություններին մասնակցել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունների տարածքում առկա ցանկացած հարմարեցված ընտրական տեղամասում,
- ✔ մունիցիպալիտետի սակրեբուլոյի միջանկյալ ընտրություններին մասնակցել համապատասխան տեղական մեծամասնական ընտրատարածքի տարածքում առկա ցանկացած հարմարեցված ընտրական տեղամասում:

Հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկելու նպատակով քվեարկության օրվանից առնվազն 8 օր առաջ (21 ապրիլի) պետք է դիմի համապատասխան ընտրատարածքային/տեղամասային ընտրական հանձնաժողովին:

Ընտրական հանձնաժողովի քարտուղարը ընտրողի դիմումը գրանցում է գրանցամատյանում և դիմումի ընդունումը վավերացնում ստորագրությամբ: Գրավոր դիմումի մեջ պետք է նշված լինի ընտրողի անձնական համարը: Հեռախոսային բանավոր դիմում ընդունելու դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում պետք է նշի հեռախոսային հաղորդագրությունը ստանալու ճշգրիտ ժամանակը, հեռախոսահամարը,

ընտրողի անունը, ազգանունը, նրա անձնական համարը և այն հարմարեցված ընտրական տեղամասի համարը, որտեղ նա պահանջում է մասնակցել ընտրություններին: Հեռախոսային բանավոր դիմումի ընդունումը հանձնաժողովի իրավազոր անձը ստորագրությամբ վավերացնում է գրանցամատյանում:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
> Անվասայլակից օգտվող ընտրողի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին դիմելու դեպքում, ընտրողի մասին տեղեկությունները, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ (21 ապրիլի) տեղամասային ընտրական հանձնաժողովը պետք է փոխանցի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացած, նաև սեփական տվյալների հիման վրա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 8 օր առաջ (21 ապրիլի) կազմում է և կարգադրությամբ հաստատում հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակը, որի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը) անհապաղ փոխանցվում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին: Հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (առանց լուսանկարների) անհապաղ փակցվում է աչքի ընկնող տեղում տեղամասային ընտրական հանձնաժողովի (քվեարկության) շենքերում:

Հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակի ընտրական հանձնաժողովի համար հատկացված տարբերակը տեղամասային ընտրական հանձնաժողովին է փոխանցվում քվեարկությունից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն վերստուգել անվասայլակից օգտվող ընտրողների՝ հարմարեցված ընտրական տեղամասում քվեարկելու պահանջի հիմնավորությունը և ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել այս ընտրողներին համապատասխան հատուկ ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության հարցը: Տվյալ հարցի վերաբերյալ որոշումը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա կայացնում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

Հարմարեցված ընտրական տեղամասի ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկվում են ընտրողի մասին նույն տվյալները, որոնք կան ընտրողների միասնական ցուցակում և լրացուցիչ նշվում է այս ընտրողի հերթական համարը ընտրողների միասնական ցուցակում: Հարմարեցված ընտրական տեղամասի ընտրողների հատուկ ցուցակում անվասայլակից օգտվող ընտրողին ընդգրկելու դեպքում, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղեկություն է տրամադրում այն տեղամասային ընտրական հանձնաժողովին, որի տեղամասի ընտրողների ցուցակում գրանցված ընտրողը ընդգրկվել է հատուկ ցուցակի մեջ: Նման դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրողների միասնական ցուցակում ընտրողի ազգանվան երկայնքով «փաստացի վիճակ» սյունակում անում է գրառում՝ «սայլակից օգտվող»: Գրառումը վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:

ՇՐՋԻԿ ՔՎԵԱՏՈՒՓԻ ՑՈՒՑԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՇՐՋԻԿ ՔՎԵԱՏՈՒՓԸ ՏԱՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Շրջիկ քվեատուփի ցուցակի ձևավորման համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովը: Շրջիկ քվեատուփի ցուցակը ձևավորվում է ընտրողի դիմումի հիման վրա կամ ընտրողների հատուկ ցուցակի հիման վրա:

I. Շրջիկ քվեատուփի ցուցակի ձևավորումը ընտրողի դիմումի հիման վրա

Ընտրողին շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ դիմումի (գրավոր կամ հեռախոսային բանավոր դիմում) հիման վրա ընդգրկում են, եթե.

- ✔ առողջական վիճակի պատճառով չի կարող գնալ քվեարկության շենք: Նման ընտրողների թիվը չպետք է գերազանցի ընտրական տեղամասում ընտրողների միասնական ցուցակի մեջ առկա ընտրողների 3 տոկոսը: Նշված քանակը լրանալուց հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է յուրաքանչյուր նոր մտից դիմումի մասին անհապաղորեն տեղեկացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և սպասել համապատասխան ցուցումների),
- ✔ գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, սակայն դժվար հասանելի վայրում (այսպիսի դեպքում երաշխավորվում է խորհրդատվություն անցնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի մոտ),

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկելու պահանջով ընտրողը տեղամասային ընտրական հանձնաժողովին դիմում է գրավոր կամ հեռախոսային բանավոր դիմումով քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ (21 ապրիլի), մինչև 18:00-ն:

Ընտրողի գրավոր դիմումի մեջ պետք է նշվի ընտրողի անձնական համարը: Այս դիմումի ընդունումը հանձնաժողովի քարտուղարը պետք է գրանցի գրանցամատյանում և ստորագրությամբ հաստատի դրա ընդունումը: Հեռախոսային բանավոր դիմում ընդունելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում նշում է հեռախոսային հաղորդագրությունը ստանալու ճշգրիտ ժամանակը, հեռախոսահամարը, ընտրողի անունը, ազգանունը, անձնական համարը և այն հասցեն, ուր ընտրողը պահանջում է տանել շրջիկ քվեատուփը: Հեռախոսային բանավոր դիմումի ընդունումը հանձնաժողովի քարտուղարը ստորագրությամբ հաստատում է գրանցամատյանում:

Եթե այն հասցեն, ուր ընտրողը պահանջում է տանել շրջիկ քվեատուփը, դուրս է այն ընտրական տեղամասի տարածքի սահմաններից, որտեղ հաշվառված է ընտրողը, նրան պարզաբանում են, որ ինքը չի ընդգրկվում տվյալ տեղամասի շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ:

Գրավոր կամ հեռախոսային բանավոր դիմումի հիման վրա շրջիկ քվեատուփի ցուցակում ընդգրկվելիք ընտրողների մասին տեղեկատվությունը անհապաղորեն պետք է փակցվի քվեարկության շենքում աչքի ընկնող տեղում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն վերստուգել շարժական քվեատուփի միջոցով քվեարկել պահանջելու հիմնավորությունը, և ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ (21 ապրիլի) տեղամասային ընտրական հանձնաժողովին ներկայացնել համապատասխան անձանց՝ շրջիկ քվեատուփի ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության հարցը: Տվյալ հարցի հետ կապված որոշումն ընդունում է տեղամասային ընտրական հանձնաժողովը:

II. Շրջիկ քվեատուփի ցուցակի ձևավորումը ընտրողների հատուկ ցուցակի հիման վրա

Տեղամասային ընտրական հանձնաժողովը հատուկ ցուցակում գրանցված ընտրողին շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ ընդգրկում է, եթե.

- ✔ բուժման նպատակով պառկած է հիվանդանոցում կամ այլ ստացիոնար բուժհաստատությունում, և այդտեղ չի բացվում ընտրական տեղամաս,
- ✔ գտնվում է վարչական կալանքի մեջ,
- ✔ գտնվում է կալանքի մեջ,

- ✔ զինծառայող է, ծառայում է պետական սահմանի վրա տեղակայված զորամասում կամ սահմանային ոստիկանության բաժնում, որը ընտրատեղամասից հեռու է գտնվում,
- ✔ Վրաստանի պաշտպանության նախարարության, Վրաաստանի ներքին գործերի նախարարության, Վրաստանի արդարադատության նախարարության համակարգի մեջ ընդգրկված պետական ենթագերատեսչային հաստատության՝ Հատուկ պատիժների իրականացման, Վրաստանի պետական անվտանգության ծառայության, Վրաստանի հետախուզական ծառայության և Պետական պահպանության հատուկ ծառայության զինծառայող է կամ հատուկ կոչում ունեցող անձ է, որի աշխատանքային պայմանները կամ առողջական վիճակը պահանջում են, որ նա ընտրությունների օրը լինի գրանցման վայրից այլ հասցեում, որը պատկանում է այլ ընտրատարածքի,
- ✔ ծառայում է Վրաստանի արդարադատության նախարարության համակարգի մեջ ընդգրկված պետական ենթագերատեսչային հաստատությունում՝ Հատուկ պատիժների իրականացման ծառայությունում և աշխատանքային պայմանների պատճառով չի կարող լքել աշխատատեղը։

III. Շրջիկ քվեատուփի ցուցակի ձևավորումը

Շրջիկ քվեատուփի ցուցակը ձևավորվում է ընտրողների միասնական և հատուկ ցուցակների հիման վրա։

Հանձնաժողովի քարտուղարը մինչև շրջիկ քվեատուփի ցուցակի ձևաթուղթը լրացնելը ընտրողների միասնական ցուցակում/հատուկ ցուցակում (պատի և սեղանի տարբերակներ) նշում է ընտրողին շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ տեղափոխման փաստը և այս նպատակով, ընտրողի ազգանվան դիմաց, «Փաստացի վիճակ» սյունակում անում է գրառում՝ «Շրջիկ քվեատուփ»։ Տվյալ գրառումը պարունակող միասնական ցուցակի/հատուկ ցուցակի համապատասխան էջում ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը։

Շրջիկ քվեատուփի ցուցակի քարտում (պատի/սեղանի տարբերակ) մուտքագրվում են ընտրողի մասին նույն տվյալները, որոնք կան ընտրողների միասնական ցուցակի համապատասխան տարբերակում, բացի նրա լուսանկարից, և լրացուցիչ նշվում է նրա հերթական համարը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում։

Շրջիկ քվեատուփի ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ) կազմվելուն պես փակցվում է քվեարկության շենքում տեսանելի տեղում։
Շրջիկ քվեատուփի ցուցակը (պատի և սեղանի) վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով։

IV. Շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամների որոշումը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 7 օր առաջ (22 ապրիլի) կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներից, նրանց ներկայությամբ, վիճակահանությամբ որոշում է շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամների։

Վիճակահանությունն անց է կացվում հանձնաժողովի նախագահի կողմից, կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությամբ։ Վիճակահանությունն անցկացնելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ վիճակահանության մասնակից կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների քանակին համապատասխան, պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթիկներ,
- ✔ վիճակահանությամբ որոշվելիք քանակին համապատասխան թերթերի վրա միևնույն գրելու միջոցով գրում է գործառույթի անվանումը՝ «շրջիկ քվեատուփ»,
- ✔ վիճակահանության թերթիկները վավերացնում է իր ստորագրությամբ և այնպես է ծալում, որ անհնար լինի կարդալ տեքստը, և տեղադրում է սեղանի վրա։

Վիճակահանությանը մասնակցող կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները մեկ առ մեկ վերցնում են վիճակահանության թերթիկները:

Վիճակահանությունն ավարտվելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը կազմում է ակտ, որում մուտքագրվում են վիճակահանությամբ գործառույթների բաշխման արդյունքները: Ակտը ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը վիճակահանությամբ գործառույթների բաշխման արդյունքները գրառում է քվեարկության օրվա գործավարության մատյանի համապատասխան էջում:

Եթե վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը հրաժարվում է իրեն շնորհված գործառույթի իրականացումից, նա կորցնում է հանձնաժողովի անդամների այլ գործառույթների բաշխման համար անցկացվելիք հերթական վիճակահանությանը մասնակցելու իրավունքը (հանձնաժողովի տվյալ անդամին գործառույթ շնորհելու հարցը վճռում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը), ինչպես նաև, շրջիկ քվեատուփը տանող անդամի գործառույթի կատարումը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնարարում է հանձնաժողովի այլ անդամի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Այն ընտրական տեղամասում, որտեղ գրանցված ընտրողների թիվը գերազանցում է 1500-ը, կարելի է օգտագործել մեկից ավելի շրջիկ քվեատուփ: Նման անհրաժեշտության դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մրցույթի կարգով լրացուցիչ կընտրի շրջիկ քվեատուփը/քվեատուփերը տանող հատուկ խմբի/հատուկ խմբերի 2-2 անդամներ, որոնք շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամների հետ միասին կապահովեն շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացի վարումը:

Ընտրական տեղամասում մեկից ավելի շրջիկ քվեատուփ օգտագործելու դեպքում մեկ շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը կիրականացվի վիճակահանությամբ ընտրված կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի 2 անդամների կողմից: Մնացած շրջիկ քվեատուփի/քվեատուփերի միջոցով քվեարկության գործընթացը կիրականացվի հատուկ խմբի 2-2 անդամների հետ, ինչպես նաև վիճակահանությամբ ընտրված կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի լրացուցիչ մեկական անդամների կողմից:

Ընտրական տեղամասում մեկից ավելի շրջիկ քվեատուփ օգտագործելու դեպքում շրջիկ քվեատուփը/քվեատուփերը տանող հանձնաժողովի անդամներին որոշելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ միանման թերթիկների վրա, նույն գրելու պարագայով պատրաստում է կուսակցությունների կողմից նշանակված անդամներին համապատասխան թվով վիճակահանության թերթիկներ և դրանց վրա նշում կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի բոլոր անդամների անուն-ազգանունները,
- ✔ իր ստորագրությամբ վավերացնում է վիճակահանության թերթիկները և այնպես ծալում, որ անհնար լինի տեքստը կարդալ:

Վիճակահանության թերթիկները տեղադրվում են սեղանի վրա, որոնք տեղամասային հանձնաժողովի նախագահը մեկ-մեկ վերցնում է: Սկզբում որոշվում են №1 շրջիկ քվեատուփը տանող տեղամասային ընտրական հանձնաժողովի 2 անդամներ, ապա №2 շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի 1 անդամ, որը կավելանա հատուկ խմբի 2 անդամներին և այլն:

Վիճակահանությանը պետք է ներկա գտնվեն կուսակցությունների կողմից նշանակված

տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները։ Հանձնաժողովի անդամների չներկայանալը չի հանդիսանում քվեարկության անցկացմանը խոչընդոտող հանգամանք։ Վիճակահանության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը կազմում է ակտ, որի մեջ տեղ են գտնում վիճակահանությամբ գործառույթների բաշխման արդյունքները։ Ակտը ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը։ Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը վիճակահանությամբ գործառույթների բաշխման արդյունքները գրանցում է քվեարկության օրվա գործավարության մատյանի համապատասխան էջում։

Եթե վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը կամ հատուկ խմբի անդամը հրաժարվում է իրեն շնորհված գործառույթի իրականացումից, շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամի գործառույթի իրականացումը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնարարում է հանձնաժողովի այլ անդամի։ Ինչպես նաև, վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը, որը հրաժարվել է իրեն շնորհված գործառույթի կատարումից, կորցնում է հանձնաժողովի անդամների այլ գործառույթների բաշխման համար անցկացվելիք հերթական վիճակահանությանը մասնակցելու իրավունքից։ Հանձնաժողովի տվյալ անդամին գործառույթ շնորհելու հարցը վճռում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը։

ԸՆՏՐՈՂԻ ԹԵՐԹԻԿ

Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավազոր է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ (27 ապրիլի) ընտրական տեղամասի տարածքում հաշվառված և ընտրողների միասնական ցուցակի մեջ ընդգրկված բոլոր ընտրողներին փոխանցել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստացած ընտրողների թերթիկները։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները հանձնաժողովի քարտուղարին պետք է վերադարձնեն այն ընտրողների թերթիկները, որոնք չեն կարողացել բաժանել ընտրողներին։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողի թերթիկ չստանալը քվեարկության մասնակցելու իրավունքի սահմանափակման հիմք չէ։

ԳԼՈՒԽ II.

ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության նախապատրաստման և նրա անցկացման նպատակով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է.

- ✔ Ընտրական փաստաթղթեր, այդ թվում.
  - միասնական ընտրացուցակի վեջնական տարբերակը (պատի և սեղանի),
  - ընտրողների հատուկ ցուցակը (պատի և սեղանի),
  - շրջիկ քվեատուփի ցուցակի (պատի և սեղանի) ձևաթղթեր,
  - ընտրողների թերթիկներ,
  - քվեաթերթիկներ, որոնք փաթեթավորված են 50-50 հատով (քվեաթերթիկը պաշտպանության և համապատասխան սարքավորման մեջ օգտագործման նպատակով ունի հատուկ շտրիխ-կոդ և անհատական QR կոդ),
  - քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ- ծրարներ,
  - ընտրողի ստուգումը հավաստող ակտեր,
  - էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթուղթ,
  - քվեարկության օրվա գործավարության մատյանը (այսպես կոչված թելակարված գիրք),
  - քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններ և ուղղումներ անելու արձանագրությունների ձևաթղթեր,
  - քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունը։

- ✔ Ընտրական պարագաներ, այդ թվում.
  - ընտրողների ստուգման սարք/սարքեր, որոնցում ներբեռնված են համապատասխան ընտրատեղամասի ընտրական հանձնաժողովի համար նախատեսված ընտրողների ցուցակները (ցուցակ լուսանկարներով)։ Յուրաքանչյուր 700 ընտրողի համար պետք է նախատեսված լինի ընտրողների ստուգման առնվազն մեկ սարք,

- ընտրողների ստուգման սարքից/սարքերից տպված ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների զետեղման համար հատկացված անթափանց տուփ/տուփեր, տվյալ տուփի/տուփերի համար հատկացված անհատական համար ունեցող կապարակնիքներ և ճեղքի կապարակնիքներ,
- առնվազն երկու հիմնական քվեատուփեր, դրանց վրա տեղադրելու ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքեր,

- շրջիկ քվեատուփ/քվեատուփեր (ըստ անհրաժեշտության),
- հիմնական/շրջիկ քվեատուփերի կապարակնիքներ և քվետուփերի ճեղքի կապարակնիքներ,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը և թանաքի բարձիկը,
- քվեարկության խցիկներ (յուրաքանչյուր 800 ընտրողի համար պետք է

նախատեսված լինի առնվազն մեկ գաղտնի քվեարկության խցիկ, անհրաժեշտության դեպքում պետք է նախատեսվի սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար հարմարեցված քվեախցիկ),
- նշմարման հեղուկ և նշմարումը ստուգող հատուկ սարք՝ ուլտրամանուշակագույն լապտեր,
- քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչներ(մարկերներ),
- խոշորացնող ոսպնյակ՝ տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար, և հատուկ շրջանակ՝ տեսողությունից զուրկ ընտրողների համար,
- պատճենահան մեքենա,
- դյուրակիր համակարգիչներ (հնարավորության սահմաններում),
- գրանցումն իրականացնողների կնիքները (գրանցումն իրականացնողների քանակին համապատասխան),
- մետաղյա կապիչներ։

✔ Ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ այլ նյութեր, այդ թվում.
- թեկնածուների ցուցակներ,
- ԿԸՀ-ի կարգադրությամբ հաստատված քվեաթերթիկները լրացնելու կարգը (փակցվում է քվեարկության շենքում աչքի ընկնող տեղում),
- քաղվածք «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքից, թե որ դեպքում է քվեաթերթիկն անվավեր,
- ընտրական փաստաթղթերի փաթեթավորման ծրարներ և այլն։

ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթեր/պարագաներ ստանալու համար պատասխանատու անձն է: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն անձամբ է պատասխանատու քվեաթերթիկների, քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարների, հանձնաժողովի հատուկ կնիքի, ամփոփիչ արձանագրության և այլ ընտրական փաստաթղթերի պահման և ըստ նշանակման տրամադրման համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցում է.

- ✔ ընտրական հանձնաժողովների համար հատկացված ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները (սեղանի ցուցակ՝ լուսանկարներով),
- ✔ ընտրողների ստուգման սարք/սարքեր, որում ներբեռնված են համապատասխան ընտրատեղամասի ընտրական հանձնաժողովի համար նախատեսված ընտրողների ցուցակները (ցուցակ լուսանկարներով),
- ✔ հիմնական քվեատուփերի վրա տեղադրելու ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքեր,
- ✔ 50-50 հատ փաթեթավորած քվեաթերթիկներ և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարներ,
- ✔ քվեարկության օրվա գործավարության մատյան:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին քվեաթերթիկները և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարները, քվեարկության օրվա գործավարության մատյանը, ընտրողների ստուգման սարքը/սարքերը, հիմնական քվեատուփերի վրա տեղադրելու ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերը փոխանցելիս՝ երկու օրինակով կազմվում է հանձնման-ընդունման ակտ, որում նշվում է.

- ✔ դրանք փոխանցող և ընդունող հանձնաժողովների անվանումները,
- ✔ փոխանցված նյութերի/պարագաների քանակը (ընտրողների ստուգման սարքի և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի թիվը, քվեաթերթիկների կապոցների թիվը, քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարների թիվը),
- ✔ դրանք հատկացնող և ընդունող անձանց ինքնությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Մինչև ընդունման-հանձնման ակտի ձևակերպումը ընդունող և հատկացնող անձինք ստուգում են քվեաթերթիկների տվյալների ճշտությունը և քվեաթերթիկների ու քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարների քանակի համապատասխանությունը ընդունման-հանձնման ակտում տեղ գտած տվյալներին: Դրանից հետո քվեաթերթիկները կրկին կապարակնքվում են, ինչը կողմերը հավաստում են ստորագրություններով:

Ընդունման-հանձնման ակտը ստորագրում են ընտրական փաստաթղթերը հատկացնող և ընդունող անձինք: Ակտի մեկ օրինակը մնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում, երկրորդը՝ փոխանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովին: Ընդունման-հանձնման ակտը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցամատյանի մտից փաստաթղթերի բաժնում: Ընդունման-հանձնման ակտը հանրային տեղեկատվություն է:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է, քվեարկության ընթացակարգերի անցկացման նպատակով, օրենքով սահմանված կանոնների պահպանմամբ, քվեարկության սկզբից առնվազն մեկ օր առաջ (28 ապրիլի) կահավորել քվեարկության շենքը:

Քվեարկության շենքում.

- ✔ պետք է տեղեր առանձնացվեն ընտրողների գրանցման համար,
- ✔ ընտրողների գրանցման համար հատկացված գրանցման սեղանի/սեղանների վրա պետք է տեղադրվի/տեղադրվեն ընտրողների ստուգման սարք/սարքեր (յուրաքանչյուր 700 ընտրողի համար պետք է նախատեսված լինի ընտրողների ստուգման առնվազն մեկ սարք): Ընտրական տեղամասում մեկից ավելի ընտրողների ստուգման սարքի առկայության դեպքում, սարքերն իրար հետ միացվում են (սինքրոնացվում են) առանց ինտերնետի,
- ✔ յուրաքանչյուր 800 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն մեկ գաղտնի քվեարկության խցիկ: Քվեարկության շենքում գաղտնի քվեախցիկը այնպես պետք է տեղադրվի, որպեսզի ապահովվի ընտրողի կողմից քվեաթերթիկը լրացնելու գաղտնիությունը. քվեախցիկը մի կողմից (ընտրողի համար մուտքը) մնում է բաց, և այս կողմը պետք է ուղղված լինի դեպի քվեարկության շենքի պատն այնպես, որ չխախտվի քվեարկության գաղտնիության սկզբունքը: Գաղտնի քվեախցիկում պետք է դրված լինի քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչ (մարկեր),
- ✔ պետք է լինի առնվազն երկու հիմնական քվեատուփ՝ դրանց վրա տեղադրված ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերով: Ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերն իրար հետ կապակցվում (սինքրոնացվում) են առանց ինտերնետի,
- ✔ հիմնական քվեատուփին մոտ պետք է տեղ հատկացվի հատուկ շրջանակ-ծրարների զետեղման համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Քվեարկության շենքում հիմնական քվեատուփերը բոլորի համար տեսանելի տեղում այնպես պետք է լինեն տեղադրված, որ ընտրողն, առանց խոչընդոտի, մոտենա և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով հիմնական քվեատուփերից որևէ մեկի մեջ զետեղի քվեաթերթիկը:

Քվեարկության շենքում բոլորի համար տեսանելի տեղում պետք է փակցված լինեն.

- ✔ միասնական ընտրացուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
- ✔ ընտրողների հատուկ ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
- ✔ շրջիկ քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
- ✔ թեկնածուների ցուցակները,
- ✔ ԿԸՀ-ի կողմից սահմանված՝ քվեաթերթիկների լրացման կարգը,
- ✔ քաղվածք «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքից, թե որ դեպքում է քվեաթերթիկն անվավեր,
- ✔ քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Եթե քվեաթերթիկի մեջ ներառված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին, այդ մասին հայտարարություն պետք է փակցվի բոլորի համար տեսանելի տեղում՝ քվեարկության շենքում և գաղտնի քվեախցիկներում:

ՄԱՍ III

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

ԳԼՈՒԽ I.

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ԲԱՑԵԼԸ, ՄԻՆՉԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ՄԿՍԵԼՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ԲԱՑԵԼԸ

Ընտրատեղամասը բացվում է քվեարկության օրը, ժամը 6-ն անց 45 րոպեին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
Եթե պարզվում է, որ այդ պահի համար տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը պակաս է իննից, տվյալ տեղեկությունն անհապաղորեն հաղորդվում է վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին, որն անհապաղորեն կայացնում է համապատասխան որոշում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են քվեարկության օրվա ընթացքում կրել իրենց համար հատկացված հատուկ համազգեստ և անպայման պետք է կրեն ինքնությունն ու կարգավիճակն արտացոլող կրծքանշան (վկայական): Տվյալ պահանջի չկատարումը վերադաս ընտրական հանձնաժողովի կողմից կքննարկվի որպես կարգապահական խախտում և կարգապահական պատասխանատվության ենթարկման հիմք կհանդիսանա:

Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեն.

- ✔ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները,
- ✔ վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները/ներկայացուցիչները,
- ✔ գրանցված տեղական դիտորդական կազմակերպությունների դիտորդները (ոչ ավելի, քան միևնույն տեղական դիտորդական կազմակերպության 1 դիտորդ),
- ✔ գրանցված միջազգային կազմակերպությունների դիտորդները (ոչ ավելի, քան միևնույն միջազգային կազմակերպության 2 դիտորդ, հնարավոր է, որ նրանց ուղեկցի թարգմանիչ),
- ✔ լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչները (միևնույն մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ոչ ավելի, քան 2 ներկայացուցիչ),
- ✔ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովում գրանցված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները (միևնույն ընտրական սուբյեկտի ոչ ավելի, քան 1 ներկայացուցիչ):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝
Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն ընտրական սուբյեկտին ներկայացնում է միայն այն ընտրական հանձնաժողովի հետ հարաբերության մեջ, որում նա ունի գրանցում:

Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք անպայման պետք է կրեն իրենց ով լինելը և կարգավիճակը մատնանշող կրծքանշան (վկայական):

ԴԻՏՈՐԴԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՅԼ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը քվեարկության օրը օգտվում է Վրաստանի ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված լիազորություններից, այդ թվում, նա իրավունք ունի.

- ✔ քվեարկության օրը ցանկացած ժամանակ գտնվել քվեարկության շենքում, առանց սահմանափակման տեղաշարժվել ընտրական տեղամասի տարածքում և ազատ, առանց խոչընդոտի դիտարկել քվեարկության գործընթացի բոլոր փուլերը ցանկացած տեղից,
- ✔ դիտարկել քվեարկության օրը բողոքների գրանցման գործընթացը,
- ✔ քվեարկության օրը ցանկացած ժամանակ փոխարինել իրեն ներկայացնող կազմակերպության այլ գրանցված ներկայացուցչի (այսպիսինի գոյության դեպքում):

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցիչն իրավունք չունի.

- ✔ միջամտել ընտրական հանձնաժողովի գործառույթներին և գործունեությանը,
- ✔ ներգործել ընտրողների ազատ կամարտահայտման վրա,
- ✔ քարոզել ընտրողին որևէ ընտրական սուբյեկտի օգտին կամ ի վնաս որևէ ընտրական սուբյեկտի,
- ✔ կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանշանը և նշանը,
- ✔ քվեարկության օրը քվեարկության շենքում գտնվել առանց կրծքանշանի,
- ✔ խախտել «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքի այլ պահանջներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝
Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչը, առանց ընտրական գործընթացին խանգարելու, կարող է քվեարկության շենքում իրականացնել լուսանկարահանում և տեսանկարահանում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա կողմից կատարվում է քվեախցիկի կամ ընտրողների ստուգման սարքի մեջ/սարքերի մեջ ներբեռնած ընտրողների ցուցակի լուսանկարահանում:

Թույլչի տրվում դիտորդի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի կողմից ընտրողների ստուգման սարքի մեջ/սարքերի մեջ ներբեռնած ընտրողների ցուցակում առկա տվյալները մշակել (այդ թվում, լուսանկարահանել, հավաքել, մուտքագրել, պահել), օգտագործել, բացահայտել, փոխանցել կամ/և տարածել, նրանք իրավունք ունեն դիտարկել ընտրողների գրանցման և քվեաթերթիկների հատկացման գործընթացը: Ընտրողների տվյալների մշակման արգելքը տարածվում է նաև այն դեպքի վրա, եթե քվեարկության գործընթացն ընթանում է առանց ընտրողների ստուգման սարքի/սարքերի օգտագործման, ընտրողների սեղանի ցուցակի տպագիր տարբերակի օգտագործմամբ:

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ԲԱՑՎԵԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍՎԵԼՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ընտրատեղամասը բացվելուց մինչև քվեարկությունը սկսվելն ընթացակարգերն անց են կացվում հետևյալ հաջորդականությամբ.

I. Ընտրական տեղամասը բացվելուն պես բացվում է քվեարկության օրվա գործավարության մատյան:
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասը բացվելուն պես, քվեարկության օրվա գործավարության մատյանը փոխանցում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին: Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է հանձնաժողովի նախագահի հետ մեկտեղ գրանցել քվեարկության օրվա բոլոր ընտրական ընթացակարգերը և նշել դրանց իրականացման ժամանակը:

Քվեարկության օրվա գործավարության մատյանի առաջին էջում հանձնաժողովի քարտուղարը գրանցում է քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անունները և ազգանունները (նրանց ընտրող/նշանակող սուբյեկտների մատնանշմամբ), ինչպես նաև քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր այլ անձանց անուններն ու ազգանունները (նրանց ներկայացնող կազմակերպության կամ ընտրական սուբյեկտի մատնանշմամբ) և ստորագրությամբ վավերացնել է տալիս նրանց:

Քվեարկության օրվա գործավարության մատյանի 2-րդ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ 10-րդ և հաջորդ էջերում, հանձնաժողովի քարտուղարը գրանցում է ընտրատեղամասը բացվելուց հետո քվեարկության շենք ներկայացած հանձնաժողովի անդամի, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող այլ անձանց տվյալները, նրանց՝ ընտրական տեղամաս մուտք գործելու ժամանակի մատնանշմամբ, և ստորագրությամբ վավերացնել է տալիս նրանց:

II. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում է կապարակնքված փաթեթի ամբողջականությունը, որում տեղադրված է հանձնաժողովի հատուկ կնիքը, բացում է այն (հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում նշում է կնիքի համարը):

III. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման նպատակով վիճակահանություն է անցկացնում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև բաշխվելիք գործառույթներն են.

- ✔ ընտրողների գրանցում իրականացնող (առնվազն մեկ գրանցող յուրաքանչյուր 700 ընտրողի հաշվով),
- ✔ քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակահանությանը չեն մասնակցում հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի նախագահի տեղակալը, հանձնաժողովի քարտուղարը։

Հատուկ շրջանակ-ծրարների ըստ նշանակության օգտագործումը, քվեատուփի և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի վերահսկողությունն իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը կամ, անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի նախագահի կամ նախագահի տեղակալի հանձնարարությամբ՝ հանձնաժողովի այլ անդամ։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, մինչև վիճակահանության անցկացումը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը պետք է համեմատի բաշխվելիք գործառույթների թվին։

Եթե պարզվի, որ վիճակահանության ժամանակ ներկա գտնվող հանձնաժողովի անդամների թիվը բաշխվելիք գործառույթներից.

- ✔ մեկով պակաս է՝ նվազեցվում է ընտրողներին գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թիվը, կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կատարում է ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթ,
- ✔ երկուսով պակաս է՝ ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թվի նվազեցման հետ հանձնաժողովի նախագահը կատարում է ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթ։

Նախ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների միջև վիճակահանություն է անցկացնում ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին որոշելու համար։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին որոշելու համար անցկացվող վիճակահանությանը չեն մասնակցում կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամներին թվին համապատասխան, պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթիկներ,
- ✔ որոշելու քանակին համապատասխան թերթիկների վրա միևնույն գրելու միջոցով գրում է գործառույթի անվանումը՝ «ընտրողներին գրանցող»,
- ✔ վիճակահանության թերթիկները վավերացնում է հանձնաժողովի հատուկ կնիքով,
- ✔ վիճակահանության թերթիկներն այնպես է ծալում, որ անհնար լինի կարդալ տեքստը և տեղադրում է սեղանի վրա։

Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ առ մեկ վերցնում են վիճակահանության թերթիկները։ Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրառում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում (հանձնաժողովի անդամները ստորագրությամբ հաստատում են գործառույթի շնորհումը)։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե վիճակահանությանը մասնակցող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամների թիվը **համապատասխանում է** վիճակահանությամբ որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թվին, վիճակահանություն չի անցկացվում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամներին ինքնաբերաբար կշնորհվի ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթ:

Եթե վիճակահանությանը մասնակցող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամների թիվը **գերազանցում է** վիճակահանությամբ որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թիվը, ապա ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամները կորոշվեն վիճակահանությամբ:

Եթե վիճակահանությանը մասնակցող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամների թիվը **պակաս է** վիճակահանությամբ որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թվից, վիճակահանություն չի անցկացվում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամին ինքնաբերաբար կշնորհվի ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթ, և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթի իրականացումը հանձնարարում է ընտրական հանձնաժողովի այլ անդամի/անդամների:

Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին որոշելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների միջև անցկացնում է հերթական վիճակահանությունը, որով կընտրվի քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- ✔ վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամներին թվին համապատասխան, պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթիկներ,
- ✔ թերթիկներից մեկի վրա գրում է գործառույթի անվանումը՝ «ընտրողների հոսքը կարգավորող»,

- ✔ վիճակահանության թերթիկներն այնպես է ծալում, որ անհնար լինի կարդալ տեքստը և տեղադրում է սեղանի վրա:

Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ առ մեկ վերցնում են վիճակահանության թերթիկները: Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրառում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում (հանձնաժողովի անդամները ստորագրությամբ հաստատում են գործառույթի շնորհումը):

Հանձնաժողովի անդամի վիճակահանությամբ սահմանված գործառույթը հանձնաժողովի այլ անդամի ժամանակավորապես կարելի է փոխանցել միայն հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, ինչը հանձնաժողովի քարտուղարը նշում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 5-րդ էջում՝ ժամանակի մատնանշմամբ: Հանձնաժողովի անդամը ստորագրությամբ վավերացնում է գործառույթի փոխանցումը:

Եթե հանձնաժողովի որևէ անդամ հանձնաժողով է ներկայացել վիճակահանության ընթացակարգն ավարտվելուց հետո, նրան գործառույթ շնորհելու հարցը վճռում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, իսկ նրա աշխատանքի վարձատրության հարցը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

IV. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է ընտրողների թիվը՝ ըստ ընտրացուցակների, ինչպես նաև՝ ստացած քվեաթերթիկների և քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարների քանակը:
Հանձնաժողովի քարտուղարն այդ տվյալները, բացառությամբ քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարների քանակի, մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ: Ցուցադրական արձանագրության մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում հատուկ ցուցակում ընտրողների թիվը մուտքագրվում է քվեարկությունն ավարտվելուց հետո:

V. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ընտրողներին ստուգող սարքի/սարքերի մեջ ակտիվացնում է ընտրողների ստուգման գործընթացը:



Ընտրողներին ստուգող սարքի/սարքերի մեջ ընտրողների ստուգման գործընթացն ակտիվացնելուն պես հանձնաժողովի նախագահը սարքից/սարքերից տպում է մեկնարկային հաշվետվությունը/հաշվետվությունները, ինչով հաստատվում է, որ ընտրողների ստուգող սարքով/սարքերով ոչ մի ընտրողի ստուգում տեղի չի ունեցել: Տպված մեկնարկային հաշվետվությունը/հաշվետվությունները պահելու համար փոխանցում է հանձնաժողովի քարտուղարին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.
Ընտրողներին ստուգող սարքը/սարքերը հնարավոր է ակտիվացնել և այս սարքից/սարքերից նախնական հաշվետվությունը/հաշվետվությունները տպել միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից նշված սարքում/սարքերում հատուկ անհատական կոդը/գաղտնաբառը մուտքագրելուց հետո:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը մինչև ընտրողների ստուգման սարքի/սարքերի ակտիվացումը ստուգում է, թե հնարավոր է արդյոք այս սարքը/սարքերը ակտիվացնել առանց հատուկ անհատական կոդի/գաղտնաբառի մուտքագրման:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգման սարքում/սարքերում ընտրողների ստուգման գործընթացն ակտիվացնելուց հետո, ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներից որևէ մեկին ցուցում է տալիս, որ նա իրեն փոխանցված ստուգման սարքից տպի ընտրողների ցուցակը (ընտրողի հերթական համարի, ազգանվան և փաստացի վիճակի մատնանշմամբ), որը ցուցադրական արձանագրության հետ կփակցվի երևացող տեղում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը վերը նշված ընթացակարգերին զուգահեռ ապահովում է էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ համապատասխան տեղեկության նշումը:

VI. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է հիմնական և շրջիկ քվեատուփերը և նրանից հետո, երբ հաստատվում է, որ քվեատուփերը դատարկ են, հիմնական քվեատուփերի վրա տեղադրում է ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքեր, ինչից հետո անհատական համար ունեցող կապարակնիքով կապարակնքում է հիմնական և շրջիկ քվեատուփերը:

Հիմնական քվեատուփերը այնպես են կապարակնքվում, որ առանց կապարակնիքը վնասելու անհնար լինի քվեատուփերի մեջ քվեաթերթիկը ձեռքով տեղադրել կամ/և հանել և քվեատուփերի վրա տեղադրված ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերը հեռացնել:

Քվեատուփերը կապարակնքելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը սարքերից կտպի հաստատումը («զրոյական քաղվածքը») նրա, որ այդ պահի դրությամբ ոչ մի ընտրող չի քվեարկել սարքի միջոցով և տպած տարբերակը փոխանցում է հանձնաժողովի քարտուղարին պահելու համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեատուփերի անհատական կապարակնիքների համարները և կապարակնքման ճշգրիտ ժամանակը մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում: Նույն էջում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ու քարտուղարն իրենց ստորագրությամբ հաստատում են դատարկ քվեատուփերի կապարակնքման և քաղվածքում տրված տեղեկությունն այն մասին, որ այդ պահի դրությամբ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով ոչ մի ընտրող չի քվեարկել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղյակ է պահում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին քվեատուփերը կապարակնքելու և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերից հաստատումը («զրոյական քաղվածք») տպելու մասին:

Վերը նշված ընթացակարգից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը այն նպատակով, որ ստուգի, թե ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքն ընդունում է արդյոք քվեաթերթիկն առանց շտրիխ-կոդի և անհատական QR կոդի, ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի մեջ տեղադրում է առանց հատուկ շտրիխ-կոդի և անհատական QR կոդի քվեաթերթիկի ֆորմատի թուղթ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը վերոնշյալ ընթացակարգերին զուգահեռ ապահովում է էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ համապատասխան տեղեկության նշում:

VII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամներին վիճակահանությամբ շնորհված գործառույթի կատարման նպատակով փոխանցում է ընտրական փաստաթղթերը և ընտրական նյութերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամին փոխանցում է.

- ✔ 50 հատ քվեաթերթիկ (գրանցում իրականացնողը պետք է ստուգի փաթեթի մեջ քվեաթերթիկների քանակի ճշտությունը և նախագահի հետ ստորագրությամբ հաստատի ընդունման-հանձնման ակտով),

- ✔ քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչ (ընտրողին քվեաթերթիկի լրացման կարգը բացատրելու գործընթացում քվեաթերթիկի վրա ընտրողի կողմից փորձնական շրջանը գունավորելու նպատակով),
- ✔ քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարներ,
- ✔ նշմարման հեղուկ,
- ✔ գրիչներ (ընտրողի ստուգման սարքից տպած ընտրողի ստուգումը հավաստող կտրոնի վրա ընտրողի կողմից ստորագրությունը արձանագրելու նպատակով),
- ✔ ընտրողների ստուգման սարքից/սարքերից տպված՝ ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների զետեղման համար հատկացված անթափանց տուփ/տուփեր (մինչև փոխանցումը հանձնաժողովի նախագահը անհատական համար ունեցող կապարակնիքով կապարակնքում է տվյալ տուփը)։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում մուտքագրում է ընտրողների ստուգման սարքից տպած ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների տեղադրման համար հատկացված կապարակնքված տուփի/տուփերի կապարակնիքների անհատական համարները, գրանցում իրականացնողների անունը, ազգանունը, որոնց փոխանցվել են տվյալ տուփերը։ Տուփը ստանալը համապատասխան գրանցում իրականացնողը հաստատում է ստորագրությամբ։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին փոխանցում է նշմարումը ստուգող ուլտրամանուշակագույն լապտեր։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Այն ընտրական տեղամասում, որտեղ գրանցված ընտրողների թիվը գերազանցում է 2700-ը, քվեարկության ընթացքում, անհրաժեշտության դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումով կարելի է.

- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներից մեկին լրացուցիչ հանձնարարվի կատարել ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթ,
- ✔ օգտագործվի ոչ պակաս, քան ընտրողների ստուգման հինգ սարք,
- ✔ լրացուցիչ օգտագործվի երրորդ հիմնական քվեատուփ՝ նրա վրա տեղադրված ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքով։

Նշված սարքերը քվեարկության սկզբում պետք է սինքրոնացվեն մնացած սարքերի հետ։

ԳԼՈՒԽ II.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Քվեարկությունն անց է կացվում քվեարկության օրվա (29 ապրիլի) ժամը 08:00-ից մինչև ժամը 20:00-ն: Ձայն տալու ընթացակարգն անց է կացվում հետևյալ կարգի և հաջորդականության պահպանմամբ.

I. Քվեարկության սենյակ մտնելիս՝ ընտրողը ընտրողների հոսքը կարգավորողի մոտ անցնում է նշմարման ստուգման ընթացակարգ:

Ընտրողների հոսքը կարգավորողը.

- ✔ կարգավորում է ընտրատեղամաս մտած ընտրողների հոսքը,
- ✔ ընտրողին խնդրում է ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը և ուլտրամանուշակագույն լապտերով ստուգում է՝ արդյոք չունի ընտրողը նշմարում,
- ✔ ընտրողին մատնանշում է, որ գնա ցանկացած այն գրանցման սեղանի մոտ, որտեղ երկուսից ավելի ընտրող չկա,

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Եթե նշմարում ստուգող հատուկ սարքը բացահայտում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը, իսկ նրա ով լինելը նշվում է քվեարկության օրվա գործավարության մատյանում:

II. Քվեարկության սենյակ մտած ընտրողը գնում է գրանցման սեղանի մոտ և գրանցվելու նպատակով ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին է ներկայացնում Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:

Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամն ստուգում է ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի համապատասխանությունն իրար:

Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը Վրաստանի քաղաքացու էլեկտրոնային անձը հաստատող փաստաթուղթը (ID քարտը) ներմուծում է ընտրողներին ստուգող սարքի ընթերցողի մեջ (քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայականի ընթեռնելի գոտի): Ընտրողների ստուգող սարքը ընտրողի կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթում առկա ընտրողի գրանցման տվյալները համեմատում է տվյալ սարքի մեջ ներբեռնված ընտրողների ցուցակում առկա տվյալների հետ և տվյալների համապատասխանության դեպքում սարքի էկրանին հայտնվում են այս ընտրողի տվյալները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ընտրողը ընտրողների գրանցում իրականացնողին ներկայացնում է Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային անձը հաստատող փաստաթուղթ կամ անձնագիր, գրանցում իրականացնողը ընտրողի տվյալները սարքի մեջ ձեռքով է որոնում:

Եթե ստուգող սարքը արձանագրի, որ ընտրատեղամաս քվեարկելու ներկայացած ընտրողն ընդգրկված է շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ կամ այլ տեղամասի համար հատկացված հատուկ ցուցակի մեջ, նրան կարգելվի ընտրատեղամասում մասնակցել քվեարկությանը:

Ընտրողի մասին տվյալները չգտնվելու դեպքում հանձնաժողովը, հնարավորության սահմաններում, օգնում է ընտրողին տեղեկատվություն գտնել այն տեղամասի մասին, որտեղ նա գրանցված է:

Ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը հաստատելու դեպքում ընտրողների գրանցում իրականացնողը կատարում է ընտրողի նշմարում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը ստուգելիս հաստատվի, որ ներկայացված փաստաթղթում տվյալ ընտրողի գրանցման տվյալները (բացառությամբ լուսանկարի) համապատասխանում են ընտրողների ստուգման սարքում ներբեռնած ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցում իրականացնողն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթի լուսանկարը միմյանց անհամապատասխան է համարում, նա դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը ստորև տրված ընթացակարգն իրականացնելուց հետո ընտրողին տալիս է քվեարկությանը մասնակցելու իրավունք:

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հաստատի նշված անհամապատասխանությունը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված

էջում անում է գրառում, որում նշում է անհամապատասխանության փաստը, ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը: Այս գրառումը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չի հաստատի տվյալ անհամապատասխանությունը, ընտրողների գրանցումն իրականացնողն իրավունք ունի քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում գրել իր առանձնահատուկ կարծիքը:

Վերոնշյալ դեպքերում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանին կցում է ընտրողի կողմից ներկայացված փաստաթղթի ֆոտոպատճենը, որը վավերացնում է ստորագրությամբ:

Ընտրողների գրանցում իրականացնողը կատարում է նշմարում ընտրողի աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա (եթե նշված գործողությունը հնարավոր չէ կատարել, ապա՝ աջ ձեռքի մյուս մատների վրա, իսկ եթե դա ևս հնարավոր չէ, ապա՝ նույն կերպ ձախ ձեռքին):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չի տրամադրվում քվեաթերթիկ:

Նշմարման ընթացակարգը կատարելուց հետո՝ ընտրողների գրանցում իրականացնողը ստուգման սարքից տպում է ընտրողի ստուգումը հավաստող կտրոնը, որը ստորագրում է ընտրողը: Տվյալ կտրոնը գրանցում իրականացնողը զետեղում է գրանցման սեղանի վրա դրված անթափանց կապարակնքված տուփի մեջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Եթե ընտրողի ստուգման սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ կտպվի տեխնիկական խոտանով, այս դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանին կցում է տվյալ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը: Ընտրողը ստուգումը հաստատող կտրոնի փոխարեն ստորագրում է համապատասխան ակտը, որն ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը տեղադրում է ընտրողի ստուգումը հաստատող կտրոնների համար հատկացված տուփի մեջ:

Ընտրողների ստուգման ընթացակարգն ավարտելուց հետո ընտրողների գրանցում իրականացնողն ընտրողին է փոխանցում քվեաթերթիկը և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը: Ընտրողների գրանցում իրականացնողը ընտրողին բացատրում է քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման և քվեաթերթիկը լրացնելու կարգը, ընտրողին գունավորել է տալիս նույն քվեաթերթիկի վրա հատուկ առանձնացված տեղում առկա փորձնական շրջանը:



III. Քվեաթերթիկը և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը ստանալուց հետո ընտրողը մտնում է գաղտնի քվեախցիկ։

Ընտրողը հատուկ նշիչի (մարկերի) օգտագործմամբ լրացնում է քվեաթերթիկը և այն զետեղում հատուկ շրջանակ-ծրարի մեջ։ Քվեաթերթիկը լրացնելիս արգելվում է այլ անձի ներկայություն։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, նա իրավունք ունի, իրեն օգնելու համար, քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի (համապատասխան ընտրական տեղամասի այլ ընտրողի), բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի։

Եթե ընտրողը կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վնասել է քվեաթերթիկը կամ հատուկ շրջանակ-ծրարը, նրանք այդ մասին պետք է տեղեկացնեն հանձնաժողովի նախագահին։ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողների գրանցումն իրականացնող անձը պարտավոր է փոխել ընտրողի վնասված քվեաթերթիկը/հատուկ շրջանակ-ծրարը նորով։ Հանձնաժողովի նախագահը ընտրողի ներկայությամբ կտրում է վնասված քվեաթերթիկի ծրարի անկյունը, վրան գրում է «վնասված է» և ստորագրում։ Հանձնաժողովի նախագահը վնասված քվեաթերթիկն առանձին է պահում։

IV. Ընտրողը հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկով գնում է հիմնական քվեատուփի մոտ։

Ընտրողը քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով ներմուծում է հիմնական քվեատուփի վրա մոնտաժված սարքի մեջ։ Այն դեպքում, եթե ընտրողը չի կարողանում հատուկ շրջանակ-ծրարի միջոցով սարքի մեջ ներմուծել քվեաթերթիկը, նրան կարող է օգնել տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձ/հատուկ շրջանակ-ծրարներն ըստ նշանակության օգտագործումը վերահսկող անձը։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Թույլ չի տրվում, որ քվեատուփին միաժամանակ մեկից ավելի ընտրող մոտենա:

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն իրավունք ունեն դիտարկելու ձայների էլեկտրոնային հաշվման սարքի մեջ հատուկ շրջանակ-ծրարի միջոցով քվեաթերթիկի ներմուծումը:

Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերադարձնի քվեաթերթիկը, այն կհամարվի վնասված: Ընտրողի ներկայությամբ կկտրվի վնասված քվեաթերթիկի անկյունը, վրան կգրվի «վնասված է», նրա վրա կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, և այն առանձին կպահվի: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է ընտրողի վնասված քվեաթերթիկը փոխել նոր քվեաթերթիկով:

V. Նրանից հետո, երբ քվեաթերթիկը սարքի միջոցով կհայտնվի քվեատուփի մեջ, ընտրողը քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը կտեղադրի դրա համար հատկացված սեղանի վրա և կհեռանա ընտրատեղամասից:

Քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարի ըստ նշանակության օգտագործումը վերահսկող հանձնաժողովի անդամը հետևում է ընտրողի կողմից հատուկ շրջանակ-ծրարը դրա համար հատկացված սեղանի վրա տեղադրմանը, օգտագործված հատուկ շրջանակ-ծրարի փոխանցմանը ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ ԱՌԱՆՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Ընտրողների ստուգման և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի տեխնիկական թերություն հայտնաբերելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը որոշում է կայացնում քվեարկության գործընթացը ժամանակավորապես դադարեցնելու մասին, ինչի վերաբերյալ պարտավոր է անհապաղ տեղեկացնել վերադաս

ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Տեխնիկական թերությունը վերացնելուն պես քվեարկությունը շարունակվում է սարքի/սարքերի միջոցով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
Այն դեպքում, երբ քվեարկության գործընթացն ընթանում էր ընտրողների ստուգման և ձայների հաշվման մեկից ավելի հատուկ էլեկտրոնային սարքի օգտագործմամբ, և տեխնիկական թերության պատճառով դադարել է աշխատել միայն դրանց մի մասը, քվեարկության գործընթացը կշարունակվի ընտրողների ստուգման և ձայների հաշվման մնացած գործող էլեկտրոնային սարքի/սարքերի օգտագործմամբ:

Այն դեպքում, եթե անհնար լինի ընտրողների ստուգման/ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերով շարունակել քվեարկությունը, քվեարկությունն առանց համապատասխան սարքի/սարքերի օգտագործման շարունակելու մասին ակտ է կազմվում և արվում համապատասխան գրառում քվեարկության օրվա գործավարության մատյանի 32-րդ էջում:

I. Քվեարկության շարունակում՝ առանց ընտրողների ստուգման սարքի/սարքերի օգտագործման

Առանց ընտրողների ստուգման սարքի/սարքերի օգտագործման քվեարկությունը շարունակելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը համապատասխան ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին/անդամներին փոխանցում է ընտրական հանձնաժողովի համար հատկացված ընտրողների ցուցակը/ցուցակները (սեղանի համար հատկացված ցուցակ լուսանկարներով), գրանցում իրականացնողներից մեկին փոխանցվում է նաև ընտրողների հատուկ ցուցակ (այդպիսինի առկայության դեպքում) և ընտրողների գրանցումը (ստուգումը) շարունակվում է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված կարգով:

Անհրաժեշտության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրական հանձնաժողովի անդամը/անդամները կատարում են ընտրողի գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
Քվեարկությունն առանց ընտրողների ստուգման սարքի/սարքերի օգտագործման շարունակելու դեպքում գրանցում իրականացնողների սեղանի մոտ կփակցվի գրանցում իրականացնողների սեղանի վրա տեղադրված ցուցակներին համապատասխան ընտրողների ազգանունների այբբենական հաջորդականությունը և ընտրողների համարների հաջորդականությունը:

Քվեարկությունն առանց ընտրողների ստուգման սարքի/սարքերի օգտագործման շարունակելու դեպքում ընտրողների գրանցումն (ստուգումը) իրականացվում է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված կարգով.

- ✔ Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամ ընտրողին, նշմարման ստուգման արդյունքների նախատեսմամբ, քվեարկության սենյակ թույլ կտա ներս մտնել այն դեպքում, եթե ընտրողների համար հատկացված գրանցման սեղանի մոտ չկա մեկից ավելի ընտրող: Քվեարկության սենյակ մտած ընտրողը գնում է այն գրանցման սեղանի մոտ, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված նրա ազգանվան առաջին տառը:
- ✔ Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը ընտրողին խնդրում է ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:

- ✔ Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամն ստուգում է, ներկայացված փաստաթղթում տեղ գտած, ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը: Ընտրողը քվեարկությանը մասնակցում է, եթե ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ, ամբողջությամբ համապատասխանում են ստորև թվարկված տվյալներից գոնե 3-ը.
  - անունը,
  - ազգանունը,
  - ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվը,
  - հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու ինքնության վկայականի կամ Գործակալության տվյալների բազայի, որը ներառում է նաև արտասահմանում գրանցման վայրը):
- ✔ Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամն ստուգում է ներկայացված փաստաթղթում և ընտրողների ցուցակում առկա լուսանկարի և ընտրողի դեմքի համապատասխանությունն իրար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ընտրողի մասին տվյալները ստուգելիս հավաստվի, որ, ներկայացված փաստաթղթում տեղ գտած, ընտրողի հաշվառման տվյալները (բացառությամբ լուսանկարի) համապատասխանում են ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցումն իրականացնողն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը միմյանց անհամապատասխան է համարում, նա դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը, ստորև սահմանված համապատասխան ընտրական ընթացակարգի կատարումից հետո, ընտրողին տալիս է քվեարկությանը մասնակցելու իրավունք:

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հաստատում է տվյալ անհամապատասխանությունը, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում, դրա համար հատկացված էջում գրառում է անում, որում նշում է անհամապատասխանության փաստը, ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը: Սույն գրառումը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չի հաստատի տվյալ անհամապատասխանությունը, ընտրողների գրանցումն իրականացնողն իրավունք ունի քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում գրել իր առանձնահատուկ կարծիքը:

Վերոնշյալ դեպքերում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանին կցում է ընտրողի կողմից ներկայացված փաստաթղթի ֆոտոպատճենը, որը վավերացնում է ստորագրությամբ:

✔ Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը ընտրողների ցուցակում ընտրողի մասին տվյալների համապատասխանության հաստատման դեպքում, իրականացնում է ընտրողի նշմարում:

✔ Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը ստորագրում է ընտրողների միասնական ցուցակի համապատասխան սյունակում և ցուցում տալիս ընտրողին ընտրողների ցուցակում ստորագրությամբ հաստատել քվեաթերթիկը ստանալը, ինչից հետո ընտրողին է փոխանցում քվեաթերթիկը և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողը, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ստորագրի նույն սյունակում: Ընտրողների գրանցումն իրականացնողը նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրի (ընտրողների միասնական ցուցակում ընտրողի համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ):

II. Քվեարկության շարունակում առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի օգտագործման

Քվեարկությունն առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի օգտագործման շարունակելու դեպքում քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ տեղամասային հանձնաժողովի նախագահը սարքերի վրայից հանում է հիմնական քվեատուփերը, որոնք ունեն քվեաթերթիկները տեղադրելու համար հատուկ ճեղք, որից հետո ընտրողը հնարավորություն ունի քվեաթերթիկը տեղադրել անմիջապես քվեատուփի մեջ:

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ» ՊԱՏՃԱՌՈՎ ԸՆՏՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ընտրողը, ով ֆիզիկական վիճակի, մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով, չի կարողանում ինքնուրույն կատարել քվեարկության ընթացակարգերը, քվեարկությանը մասնակցում է հետևյալ ընթացակարգերի նախատեսմամբ.

- ✔ ընտրողը չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը,
- ✔ ընտրողների գրանցում իրականացնողը ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողի ստուգումը հաստատող կտրոնի վրա կատարում է «ֆիզիկական վիճակ» գրառումը և ստորագրությամբ վավերացնում այն:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
> Այն դեպքում, եթե քվեարկության գործընթացն ընթանում է առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի օգտագործման, ընտրողին քվեաթերթիկ տրամադրելիս ընտրողների գրանցում իրականացնողը ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում կատարում է «ֆիզիկական վիճակ» գրառումը և ստորագրությամբ վավերացնում այն:

- ✔ Ընտրողն իրավունք ունի քվեախցիկ օգնության հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի: Տվյալ ընտրողի փոխարեն, նրա ներկայությամբ, քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի մեջ է զետեղում և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ ներմուծում նրա կողմից ընտրված անձը, որը նրան օգնում է նաև քվեախցիկում լրացնել քվեաթերթիկը:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
> Այն դեպքում, եթե քվեարկության գործընթացն ընթանում է առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի օգտագործման, «ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողի փոխարեն նրա ներկայությամբ քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի մեջ է զետեղում և քվեատուփի մեջ տեղադրում նրա կողմից ընտրված անձը, որը նրան օգնում է նաև քվեախցիկում լրացնել քվեաթերթիկը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Քվեարկության օրը քվեարկության շենքում կարգապահությունը պահպանելու համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից քվեարկության շենքում կարգապահության պահպանման նպատակով ընդունված որոշումների կատարումը պարտադիր է ընտրական հանձնաժողովի անդամների, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց և ընտրողի համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավունք ունի, հանձնաժողովի աշխատանքը խանգարելու և կարգապահությունը խախտելու դեպքում, կարգապահությունը խախտողին վտարել այն շենքից, որտեղ տեղակայված է հանձնաժողովը: Կարգը խախտողի վտարման դեպքում կազմվում է համապատասխան ակտ, որն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Փաստի հետ կապված համապատասխան նշում է արվում գործավարության մատյանում: Եթե խախտող անձը կամավոր չի կատարում վտարման մասին որոշումը, հանձնաժողովի նախագահը դիմում է ոստիկանությանը: Ոստիկանությունը պարտավոր է անհապաղ ի կատար ածել անձի վտարման մասին որոշումը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արգելվում է քվեարկության շենք զինված անձանց մուտքը:

Եթե քվեարկության շենքում կամ դրան հարող տարածքում վտանգ է ստեղծվում հասարակական կարգին, քվեարկության անցկացմանը կամ ընտրական փաստաթղթերի անվտանգ փոխադրմանը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով կարող են հրավիրվել ոստիկանության աշխատակիցներ: Հասարակական կարգի խախտումը խափանելուն պես և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ, ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը և դրան հարող տարածքը:

Բացառիկ դեպքում, քվեարկության շենքի հարող տարածքում, բայց ոչ կոնկրետ քվեարկության շենքում, ոստիկանության աշխատակիցները կարող են գտնվել նաև առանց տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջի և համաձայնության, եթե դա բացառապես անհրաժեշտ է հասարակական կարգի խախտումը խափանելու կամ հասարակական կարգը պահպանելու համար: Նման անհրաժեշտության վերացման պես, ոստիկանության աշխատակիցները պետք է լքեն քվեարկության շենքի հարող տարածքը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

Քվեարկության ժամանակ արգելվում է փակել քվեարկության շենքը, ընդհատել կամ դադարեցնել քվեարկությունը: Եթե որևէ հանգամանք խոչընդոտում է քվեարկության գործընթացին, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է այդ մասին անհապաղորեն տեղեկացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և սպասել համապատասխան ցուցումների:

ՇՐՋԻԿ ՔՎԵԱՏՈՒՓԻ ՄԻՋՈՑՈՎ ՔՎԵԱՐԿՈՒՄԸ

Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 09:00-ից և ավարտվում ժամը 19:00-ին:

Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգի ավարտից հետո անհապաղ կապարակնքվում է քվեատուփի մեջ հատուկ ծրարները գցելու ճեղքը: Շրջիկ քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ոչ ուշ, քան ժամը 20-ին:

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք, ըստ ցանկության, իրավունք ունեն դիտարկել շրջիկ քվեատուփի միջոցով ձայն տալու ընթացակարգը: Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկելիս, ավտոմեքենայից օգտվելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ավտոմեքենայի մեջ տեղ տրամադրել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 2 դիտորդներին:
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին (հատուկ խմբի անդամներին, այսպիսիների առկայության դեպքում) փոխանցում է:

- ✔ կնքված շրջիկ քվեատուփը,
- ✔ շրջիկ քվեատուփի ցուցակը,
- ✔ անհրաժեշտ քանակով քվեաթերթիկներ,
- ✔ քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչներ (մարկերներ),
- ✔ հատուկ շրջանակ-ծրարներ,
- ✔ մետաղյա ամրակներ (մետաղյա ամրակով ամրացվում է հատուկ շրջանակ-ծրարը, նրանում ընտրողի կողմից քվեաթերթիկը զետեղելուց հետո, նման կերպ հատուկ շրջանակ-ծրարը տեղադրվում է շրջիկ քվեատուփի մեջ),
- ✔ նշմարումը ստուգելու ուլտրամանուշակագույն լապտեր,

- ✔ նշմարման հեղուկ,
- ✔ գրիչներ (շրջիկ քվեատուփի ցուցակում ընտրողի կողմից ստորագրություն արձանագրելու նպատակով),
- ✔ շրջիկ քվեատուփի ճեղքի կապարակնիք։

Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցում է շրջիկ քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամներին/հատուկ խմբի անդամներին փոխանցված քվեաթերթիկների և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարների քանակը, ինչպես նաև շրջիկ քվեատուփը ընտրատեղամասից տանելու ժամանակը։

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը.

- ✔ խնդրում է ընտրողին ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
- ✔ ուլտրամանուշակագույն լապտերով ստուգում է ունի, թե՝ ոչ ընտրողը նշմարում,

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Եթե նշմարում ստուգող հատուկ սարքը բացահայտում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը։ Տվյալ փաստի հետ կապված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները պետք է բացատրագիր գրեն (ընտրողների միասնական ցուցակում ընտրողի համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ) և ստորագրեն ուղեկցող անձանց հետ։

- ✔ վավերացնում է ներկայացված փաստաթղթում ընդգրկած ընտրողի գրանցման տվյալների և շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ առկա տվյալների համապատասխանությունը,
- ✔ շրջիկ քվեատուփի ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը հաստատվելու դեպքում կատարում է ընտրողի նշմարում,

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չի տրամադրվում քվեաթերթիկ։
> Նշմարում չի կիրառվում քրեակատարողական հիմնարկներում, հիվանդանոցներում և այլ ստացիոնար բուժհաստատություններում (հիվանդների համար)։

- ✔ ստորագրում է ընտրողների միասնական ցուցակի համապատասխան սյունակում, այնուհետև ընտրողին ցուցում է տալիս ստորագրությամբ հաստատել քվեաթերթիկը ստանալը,

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը շրջիկ քվեատուփի ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողը, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ստորագրի նույն սյունակում։ Նշվածի վերաբերյալ շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը պետք է բացատրագիր գրի (շրջիկ քվեատուփի ցուցակում ընտրողի հերթական համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ)։

- ✔ Ընտրողին փոխանցում է քվեաթերթիկ, քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարի հետ։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը/հատուկ խմբի անդամը ընտրողին բացատրում է քվեաթերթիկը լրացնելու և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը: Ընտրողին ցուցում է տալիս հատուկ նշիչով (մարկերով) գունավորել ընտրողին փոխանցված քվեաթերթիկի վրա առկա փորձնական շրջանը: Ընտրողը լրացված քվեաթերթիկը պետք է տեղադրի քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարի մեջ:

Ընտրողը գաղտնիության սկզբունքի պահպանմամբ լրացնում է քվեաթերթիկը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, նա իրավունք ունի, իրեն օգնելու համար հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի:

Եթե ընտրողը կամ շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը վնասել են քվեաթերթիկը կամ քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը, հանձնաժողովի անդամը պարտավոր է փոխել ընտրողի վնասված քվեաթերթիկը/հատուկ շրջանակ-ծրարը նորով:

Շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի/հատուկ խմբի անդամը բացում է շարժական քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տալիս քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարում զետեղված քվեաթերթիկը տեղադրել նրա մեջ (հատուկ շրջանակ-ծրարը ամրացվում է մետաղյա ամրակով, նրանում ընտրողի կողմից քվեաթերթիկը զետեղելուց հետո: Նման կերպ հատուկ շրջանակ-ծրարը տեղադրվում է շրջիկ քվեատուփի մեջ):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Եթե խախտվել է շրջիկ քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը, շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները անհապաղորեն պետք է տեղեկացնեն հանձնաժողովի նախագահին, կազմեն բացատրագիր՝ պատճառի նշմամբ և ստորագրեն ուղեկցող անձանց հետ մեկտեղ:

Շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները, քվեարկության շենք վերադառնալուց հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին պետք է փոխանցեն չօգտագործված /վնասված քվեաթերթիկները և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
- ✔ Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է շրջիկ քվեատուփի ցուցակում առկա ստորագրությունների, չօգտագործված կամ/և վնասված քվեաթերթիկների թվի ճշտությունը: Անճշտության հայտնաբերման դեպքում՝ շրջիկ քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամները պետք է բացատրագիր գրեն՝ պատճառի մատնանշմամբ:
- ✔ Բացատրագրում արտացոլված տվյալները պետք է նախատեսվեն համապատասխան քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության տվյալներում:
- ✔ Հանձնաժողովի քարտուղարը ընտրողների ստորագրությունների թիվը շրջիկ քվեատուփի ցուցակում, չօգտագործված քվեաթերթիկների թիվը, ինչպես նաև ընտրական տեղամաս շրջիկ քվեատուփի վերադարձման ժամանակը գրանցում է գործավարության մատյանում:
- ✔ Հանձնաժողովի նախագահը կտրում է չօգտագործված/վնասված քվեաթերթիկների անկյունները, մակագրում է՝ վնասված է, և ստորագրությամբ հաստատում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը և քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը պարզելու նպատակով, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով ընտրողների գրանցում իրականացնողներից մեկը իրեն փոխանված ընտրողների ստուգման սարքից ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին տպում է հաշվետվություն:

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթում նշում է համապատասխան տեղեկությունները:

Համապատասխան ժամանակահատվածի համար քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը և քվեարկությանը/ընտրությունների մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը որոշելու նպատակով տպված հաշվետվության մեջ նշված քվեարկությանը մասնակցած ընտրողների թվին գումարվում է շրջիկ քվեատուփի ցուցակում (այսպիսինի առկայության դեպքում) ստորագրությունների գումարը:

Եթե ընտրատեղամասում քվեարկության գործընթացը շարունակվել է առանց ընտրողների ստուգման սարքի, ապա ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը և քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը որոշվում է ըստ տեղամասային ընտրական հանձնաժողովների համար հատկացված ընտրողների ցուցակներում եղած ստորագրությունների:

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ.
> Եթե ընտրատեղամասում քվեարկության գործընթացը շարունակվել է առանց ընտրողների ստուգման սարքի, քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը և քվեարկությանը/ընտրությունների մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը որոշելու նպատակով, ըստ անհրաժեշտության, եթե անհնար է գոնե մեկ ստուգման սարքից հաշվետվություն տպել, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը միանվագ բացում է ստուգման սարքից տպած ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները զետեղելու համար հատկացված կապարակնքված անթափանց տուփը/տուփերը, հաշվում նրանում/նրանցում զետեղված ընտրողների ստուգումը հավաստող կտրոնների թիվը, որից հետո կտրոնները կրկին զետեղում է տվյալ փաստաթղթերի համար հատկացված անթափանց տուփի/տուփերի մեջ և կնքում դրանք:

Ընտրական տեղամասում քվեարկության գործընթացի ընթացքում (ընտրողների ստուգման սարքով կամ առանց սարքի), տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում ժամը 12:00-ի և 17:00-ի դրությամբ նշում է քվեարկությանը/ընտրություններին մասնակից ընտրողների թիվը: Ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին հաշված տվյալները տեղեկացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Ընտրական տեղամասում քվեարկության գործընթացն առանց ընտրողների ստուգման սարքի ընթանալու դեպքում ընտրողների գրանցում իրականացնողները քվեարկությունն ավարտվելուց հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին բացի քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվից, պետք է փոխանցեն նաև քվեարկությանը մասնակցած ընտրողների գենդերային տվյալները: Հանձնաժողովի նախագահը տվյալները տեղեկացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

ԳԼՈՒԽ III.

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ՓԱԿԵԼԸ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ ՓԱԿԵԼԸ

Քվեարկության ընթացակարգն ավարտվում է, և քվեարկության շենքը փակվում է ժամը 20:00-ին: Այդ պահի համար հերթում կանգնած ընտրողները կարող են քվեարկել: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից մեկը հաշվառում է հերթում կանգնած ընտրողների ազգանունները, անունները և նրանց թիվը հայտնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, իսկ հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում նշում է հերթում կանգնած ընտրողների թիվը: Վերջին ընտրողի քվեարկումից անմիջապես հետո քվեարկությունը հայտարարվում է ավարտված:

Քվեարկության գործընթացն ավարտվելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը գրանցում իրականացնողներից մեկին հանձնարարում է ընտրողների ստուգման սարքից տպել վերջնական հաշվետվությունը, որը պահելու համար փոխանցում է հանձնաժողովի քարտուղարին: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը վերը նշվածի մասին էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ նշում է համապատասխան տեղեկությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանի 26-րդ և 27-րդ էջերում գրում է ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անուններն ու ազգանունները (նրանց ընտրող/նշանակող սուբյեկտների մատնանշմամբ), ինչպես նաև քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր այլ անձանց անուններն ու ազգանունները (նրանց ներկայացնող կազմակերպության կամ ընտրական սուբյեկտի մատնանշմամբ) և ստորագրությամբ վավերացնել տալիս նրանց:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է ապահովի, որ բոլոր անձինք, բացի ձայները հաշվելիս քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից, լքեն ընտրական տեղամասը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության շենքը փակելուց հետո, քվեարկության շենք մտնելու և քվեարկության շենքից դուրս գալու իրավունք ունեն քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք:

ՇՐՋԻԿ ՔՎԵԱՏՈՒՓԸ ԲԱՑԵԼԸ

Ընտրական տեղամասը փակվելուց հետո սկզբից բացվում է շրջիկ քվեատուփը:

Եթե շրջիկ քվեատուփի/քվեատուփերի կապարակնիքի ամբողջականության խախտում չի բացահայտվի, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը (անհրաժեշտության դեպքում) շրջիկ քվեաուփի/քվեատուփերի մեջ եղած քվեաթերթիկները ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով զետեղում է հիմնական քվեատուփի/քվեատուփերի մեջ այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրողի կողմից կատարված ընտրությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ✔ Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերադարձնի շրջիկ քվեատուփից հանված քվեաթերթիկը, այսպիսի քվեաթերթիկը առանձին կդրվի այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրողի կողմից արված ընտրությունը և այնուհետև կխառնվի հիմնական քվեատուփից/քվեատուփերից հաշվելու նպատակներով հանված քվեաթերթիկներին:
- ✔ Եթե շրջիկ քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում լինի սահմանված քանակից ավելի քվեաթերթիկ, առանձին կդրվի (նման քվեաթերթիկների վրա կգրվի անվավերության հիմքը՝ «ավել քվեաթերթիկ») և կավելացվի հիմնական քվեատուփի մեջ հայտնաբերված անվավեր քվեաթերթիկների քանակին:
- ✔ Եթե շրջիկ քվեատուփի մեջ հայտնաբերվի այլ ընտրական տեղամասի համար հատկացված կամ չսահմանված նմուշի քվեաթերթիկ, կդրվի առանձին և կավելացվի հիմնական քվեատուփի մեջ հայտնաբերված (այսպիսինի առկայության դեպքում) համապատասխան քանակություններին:

Ընտրատեղամասում քվեարկությունն առանց ձայների էլեկտրոնային հաշվման սարքի օգտագործման անցկացնելու դեպքում (եթե շրջիկ քվեատուփի կապարակնիքի ամբողջականության խախտում չի հայտնաբերվել) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը շրջիկ քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները զետեղում է հիմնական քվեատուփերից մեկի մեջ այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրողի կողմից կատարված ընտրությունը: Այս գործընթացն ավարտելուն պես տեղամասային ընտրական հանձնաժողովը կապարակնքում է հիմնական քվեատուփի ճեղքը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն դեպքում, եթե շրջիկ քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղորեն տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին): Հակառակ դեպքում, քվեատուփը կապարակնքվում է և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղորեն փոխանցվում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շրջիկ քվեատուփում գտնվող քվեաթերթիկները հիմնական քվեատուփում զետեղելու գործընթացն ավարտելուց հետո, ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի կողմից հաշված նախնական տվյալների հիման վրա, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայների հաշվման որևէ հատուկ էլեկտրոնային սարքից տպում է նախնական արդյունքների մասին քաղվածք, որը հանձնաժողովի քարտուղարի հետ ստորագրում է և հաստատում հանձնաժողովի կնիքով: Տվյալ քաղվածքը պահվում է քվեարկության օրվա գործավարության մատյանում (այն փոխանցվում է վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին Ընտրական օրենսգրքով նախատեսված այլ ընտրական փաստաթղթերի հետ): Հանձնաժողովի նախագահը սարքից նախնական արդյունքների մասին քաղվածքը տպելուն պես ավարտում է սարքի գործարկումը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ապահովել նախնական արդյունքների մասին քաղվածքի փակցնելը հանրային ծանոթացման համար և նախնական արդյունքների մասին քաղվածքում մատնանշված տվյալների մասին տեղեկությունները տրամադրել ԿԸՀ-ին՝ իր ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցներով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքից/սարքերից չի տպվում նախնական արդյունքների մասին քաղվածքը կամ տպվում է տեխնիկական խոտան ունեցող քաղվածք, նման դեպքում առանց խոչընդոտի շարունակվում են ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ընթացակարգերը։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը վերոնշյալ ընթացակարգերին զուգահեռ ապահովում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթում համապատասխան տեղեկության նշում։

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ՁԱՅՆԵՐԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՄԻՆՉԵՎ ՔՎԵԱՏՈՒՓԸ ԲԱՑԵԼՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայները հաշվելու ընթացակարգի համար պատրաստում է քվեարկության սենյակը։ Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրում է չորս հաշվող, իսկ դիտորդներն իրենց կազմից փոխհամաձայնությամբ կընտրեն ոչ ավելի, քան երկու վերահսկող։ Եթե դիտորդները չեն կարողանում համաձայնության գալ, նրանցից երկու վերահսկողի վիճակահանությամբ կորոշի հանձնաժողովի նախագահը։

Հաշվողների որոշման համար հանձնաժողովի նախագահը.

- ✔ հանձնաժողովի անդամների թվին համապատասխան պատրաստում է միատեսակ թերթեր,
- ✔ թերթերի վրա միևնույն գրչով գրում է գործառույթի անվանումը՝ «առաջին հաշվող», «երկրորդ հաշվող», «երրորդ հաշվող», «չորրորդ հաշվող»,
- ✔ վիճակահանության թերթերը վավերացնում է հանձնաժողովի հատուկ կնիքով,
- ✔ վիճակահանության թերթերն այնպես է ծալում, որ անհնար լինի տեքստի ընթերցումը, և տեղադրում է սեղանի վրա։

Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ առ մեկ վերցնում են վիճակահանության թերթերը։ Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրանցում է գործավարության մատյանի 3-րդ էջում (հանձնաժողովի անդամները ստորագրությամբ հաստատում են գործառույթի շնորհումը)։

Հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից վիճակահանությամբ որոշում է ոչ ավելի, քան 2 ներկայացուցչի, որոնք հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշված հաշվողների հետ միասին մասնակցում են վավեր կամ/և անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին։ Վիճակահանությանը չեն մասնակցում այն ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները, որոնց կողմից նշանակված հանձնաժողովի անդամները ևս հանդիսանում են վիճակահանությամբ որոշված հաշվողներ։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն դեպքում, երբ քվեարկության օրը ընտրություններին մասնակցած ընտրական սուբյեկտների թիվը չի գերազանցում որոշվելիք ներկայացուցիչների թիվը, ընտրատեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներին ավտոմատ կերպով շնորհվում է լիազորություն հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրված հաշվողների հետ մասնակցել վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին։ Բացի այդ, հաշվողներին որոշելու նպատակով իրականացվելիք վիճակահանությանը չեն մասնակցի այն ընտրական սուբյեկտների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները, որոնց ներկայացուցիչներին ավտոմատ կերպով տրվել են վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին մասնակցելու լիազորություն։

Հաշվողները ձայները հաշվելու համար հատկացված սեղանի մոտ այնպես են զբաղեցնում տեղերը, որ դիմացի կողմում, երկու մետր հեռավորությամբ գտնվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող մնացած անձինք (նրանք պետք է կարողանան տեսնել քվեաթերթիկները տեսակավորելու և հաշվելու գործընթացը)։

Հաշվողների կողքին կանգնում են դիտորդներից որոշված երկու հետևողները և ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից որոշված անձինք։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը այնպես է տեղ զբաղեցնում, որ կարողանա տեսնել բոլոր հաշվողներին։
Հանձնաժողովի նախագահը հաշվողների սեղանի մոտ պետք է տանի.

- ✔ ընտրողների ստուգման սարքից տպած վերջնական հաշվետվությունը,
- ✔ շրջիկ քվեատուփի ցուցակը (այսպիսինի գոյության դեպքում),
- ✔ չօգտագործված ընտրական քվեաթերթիկները,
- ✔ վնասված ընտրական քվեաթերթիկները,
- ✔ հիմնական քվեատուփերը։

Հաշվողները հաշվում են քվեարկությանը մասնակից ընտրողների ստորագրությունների թիվը ըստ շրջիկ քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում)։ Քվեարկությանը/ընտրություններին մասնակից ընտրողների վերջնական թիվը որոշվում է ստուգման սարքից տպած վերջնական հաշվետվության տվյալների և շրջիկ քվեատուփի ցուցակի հաշված ընտրողների ստորագրությունների նախատեսմամբ։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների վերջնական քանակն անհապաղորեն գրանցում է քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում: Ստուգման սարքից տպված վերջնական հաշվետվությունը պահվում է քվեարկության օրվա գործավարության մատյանում։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Ընտրատեղամասում, որտեղ քվեարկության գործընթացն ընթացել է առանց ընտրողների ստուգման սարքի, հանձնաժողովի նախագահը հաշվողների սեղանի մոտ պետք է տանի նաև հանձնաժողովի համար հատկացված միասնական ընտրացուցակները, ընտրողների հատուկ ցուցակը (եթե այդպիսիք կան) և այն դեպքում, եթե հնարավոր չէ գոնե մեկ ստուգման սարքից տպել վերջնական հաշվետվությունը՝ ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների զետեղման համար հատկացված անթափանց տուփը/տուփերը։

Այն դեպքում, երբ հնարավոր չէ գոնե մեկ ստուգման սարքից տպել վերջնական հաշվետվությունը, հաշվողները բացում են ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների համար նախատեսված անթափանց կապարակնքված տուփը/տուփերը, հաշվում նրանում/նրանցում զետեղված կտրոնների թիվը և քվեարկության մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը բոլոր տեսակի ցուցակներում: Նշված տվյալները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ մուտքագրում է քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության և քվեարկության օրվա գրանցամատյանի մեջ։

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ, ՎՆԱՍՎԱԾ ԵՎ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԿԱՊԱՐԱԿՆՔՈՒՄԸ

Հանձնաժողովի քարտուղարը կտրում է չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունները, այնուհետև առանձին-առանձին փաթեթների մեջ է զետեղում.

- ✔ շրջիկ քվեատուփի ցուցակը (այսպիսինի գոյության դեպքում),
- ✔ չօգտագործված քվեաթերթիկները,
- ✔ վնասված քվեաթերթիկները։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Այն ընտրատեղամասում, որտեղ քվեարկության գործընթացն անցկացվել է առանց ընտրողների ստուգման սարքի, հանձնաժողովի քարտուղարն առանձին-առանձին փաթեթների մեջ է զետեղում ընտրողների միասնական ցուցակը, ընտրողների հատուկ ցուցակը (այսպիսինի գոյության դեպքում), ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները:

Յուրաքանչյուր փաթեթի վրա պետք է նշվի ընտրատարածքի անվանումը և համարը, ընտրական տեղամասի անվանումը և համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը և քանակը: Փաթեթները կապարակնքվում են, կապարակնքման գծի վրա ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Ընտրական փաստաթղթերի և ընտրական պարագաների կապարակնքման համար սահմանված պահանջները չկատարելու համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

Ընտրողների ցուցակները և չօգտագործած /վնասված քվեաթերթիկները կապարակնքելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հաշվառում է այն դեպքերի թիվը, որոնք վերաբերում են ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում/ընտրողների ցուցակում առկա լուսանկարների անհամապատասխանությանն իրար, նաև քվեարկության օրվա գործավարության մատյանին կցված փաստաթղթերի քանակը (տվյալները մուտքագրում է գործավարության մատյանում): Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը տվյալ փաստաթղթերը կապարակնքում է, կնքված փաթեթի վրա նշում է ընտրական տեղամասի անվանումը, համարը, փաստաթղթերի տեսակը և ստորագրում է:

ՀԻՄՆԱԿԱՆ ՔՎԵԱՏՈՒՓԸ ԲԱՑԵԼԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է քվեատուփերի կապարակնիքների ամբողջականությունը և բացում հիմնական քվեատուփերը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Եթե քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղորեն տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին): Հակառակ դեպքում, քվեատուփը կապարակնքվում է և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղորեն փոխանցվում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Հաշվողները իրար են խառնում հիմնական քվեատուփից դատարկած քվեաթերթիկները և սկսում են քվեաթերթիկները տեսակավորելու/հաշվելու գործընթացը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼԸ/ՀԱՇՎԵԼԸ/ԿԱՊԱՐԱԿՆՔԵԼԸ

Քվեաթերթիկները տեսակավորելու և հաշվելու նպատակով առաջին հաշվողը վերցնում է քվեաթերթիկները և հայտարարում է՝ ում է տրված ձայնը, քվեաթերթիկն, ըստ ընտրական սուբյեկտի, փոխանցում է երկրորդ և երրորդ հաշվողներին, իսկ չորրորդ հաշվողին փոխանցում է անվավեր քվեաթերթիկները (այսպիսինի առկայության դեպքում):

Վավեր է սահմանված նմուշի միայն այն քվեաթերթիկը, որի վրա գունավորած է կամ/և նշված է միայն մեկ ընտրական սուբյեկտի անունից առաջ եղած համապատասխան շրջանը, անկախ քվեաթերթիկում ցանկացած այլ նշման/մակագրության առկայության (այսպիսի նշման/մակագրության առկայության դեպքում)։

Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է համարվում, եթե.

- ✔ գունավորած է կամ/և նշված է մեկից ավելի ընտրական սուբյեկտի անունից առաջ եղած համապատասխան շրջանը,
- ✔ գունավորած չէ կամ/և նշված չէ ոչ մի ընտրական սուբյեկտի անունից առաջ եղած համապատասխան շրջանը,
- ✔ շրջիկ քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարի մեջ կա սահմանված քանակից ավելի քվեաթերթիկ։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
Այն ընտրատեղամասում, որտեղ քվեարկության գործընթացն ընթացել է առանց ձաները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի, սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է համարվում այն դեպքում, եթե քվեաթերթիկը հատկացված էր այլ ընտրական տեղամասի համար (այսպիսի քվեաթերթիկները կապվում են առանձին կապոցով, դրանց թիվը չի նշվում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ և նշվում է միայն քվեարկության օրվա գործավարության մատյանում)։

Քվեաթերթիկների տեսակավորումից հետո հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս հաշվել.

- ✔ անվավեր համարված քվեաթերթիկները,
- ✔ յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայները։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայների քանակը։ Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի քարտուղարի հետ ստուգում է տվյալների ճշգրտությունը. եթե ընտրական սուբյեկտների կողմից ստացված ձայների և անվավեր քվեաթերթիկների գումարն ավել է քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թվից, հանձնաժողովի նախագահը ցուցում է տալիս կրկին հաշվել տվյալները։

Քվեաթերթիկները հաշվելու արդյունքները հանձնաժողովի քարտուղարը գրանցում է քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների համապատասխան ցուցադրական արձանագրության մեջ։

Քվեաթերթիկները հաշվելուց հետո, հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս՝ առանձին-առանձին փաթեթներով կապարակնքել.

- ✔ անվավեր քվեաթերթիկները (դրանց վրա գրվում է՝«Անվավեր է»),
- ✔ ընտրական սուբյեկտին պատկանող քվեաթերթիկների տրցակները։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
Յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին պատկանող քվեաթերթիկների փաթեթի վրա պետք է գրվեն ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովի անվանումը և համարը, սուբյեկտի տվյալները (անուն և ազգանուն) և քվեաթերթիկների թիվը։

Անվավեր քվեաթերթիկների փաթեթի վրա պետք է գրվեն ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովի անվանումը և համարը, անվավեր քվեաթերթիկների թիվը։

Կապարակնքված փաթեթները ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը: Տվյալ պահանջները չկատարելու համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ

Ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները հաստատվում են միայն ըստ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի կազմված տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությամբ (տվյալ արձանագրությունը և Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով վավերացված նրա ֆոտոպատճենն ունեն հավասարազոր իրավաբանական ուժ):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների համապատասխան ամփոփիչ արձանագրության մեջ տպագիր ձևով արտացոլված են հետևյալ տեղեկությունները.

- ✔ ընտրությունների անվանումը և քվեարկության ամիս, ամսաթիվ, տարեթիվը,
- ✔ ընտրատարածքի համարը և անվանումը,
- ✔ ընտրատեղամասի համարը,
- ✔ բացառիկ դեպքում ստեղծված ընտրական տեղամասին համարը (այսպիսինի գոյության դեպքում), որը կցված է հիմնական ընտրական տեղամասին,
- ✔ N1 սյունակում՝ միասնական ցուցակում ընտրողների թիվը,
- ✔ N2 սյունակում՝ ստացած քվեաթերթիկների թիվը,
- ✔ ընտրական սուբյեկտներիի անվանումը (կարգային համարի մատնանշմամբ),
- ✔ արձանագրությունը կազմելու տարին և ամիսը:

Ձայները հաշվելու գործընթացն ավարտվելուց հետո, հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, լրացնում է քվեարկության արդյունքների համապատասխան ամփոփիչ արձանագրությունը և մուտքագրում հետևյալ տվյալները.

- ✔ N3 սյունակում՝ հատուկ ցուցակում ընտրողների թիվը,
- ✔ N4 սյունակում՝ քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը ժամը 12-ին և 17-ին,
- ✔ N5 սյունակում՝ քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը,
- ✔ N6 սյունակում՝ անվավեր համարված քվեաթերթիկների թիվը,
- ✔ ընտրական սուբյեկտներին տրված ձայների թիվը,

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

N3, N4, N5, N6 սյունակներում, ինչպես նաև սուբյեկտներին տրված ձայների քանակի սյունակներում տրված չորս բաժանմունքանոց վանդակներից չորրորդ (վերջին) վանդակում քարտուղարը պետք է մուտքագրի միավորների կարգի թվանշանը, երրորդ վանդակում՝ տասնավորների կարգի թվանշանը, երկրորդ վանդակում՝ հարյուրավորների կարգի թվանշանը, առաջին վանդակում՝ հազարավորների կարգի թվանշանը:

Այն դեպքում, եթե համապատասխան տվյալների սյունակում մնա դատարկ վանդակ/վանդակներ, ցանկալի է հանձնաժողովի քարտուղարը դատարկ վանդակում/վանդակներում մուտքագրի «X» խորհրդանշանը:

- ✔ հանձնաժողովի հատուկ կնիքի համարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, ինչով հավաստվում է նրանց

ներկա գտնվելը ընտրական տեղամասում: Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը չի համաձայնում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունում տեղ գտած տվյալներին, նա իրավունք ունի, արձանագրությանը գրավոր կցել իր տարբերվող կարծիքը (քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրութան մեջ հատուկ հատկացված սյունակում նշվում են այն տվյալները, որոնց չի համաձայնում հանձնաժողովի անդամը, ինչը հաստատում է ստորագրությամբ): Տարբերվող կարծիքի արտահայտման դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը հանձնաժողովի անդամի ստորագրության համար հատկացված համապատասխան սյունակում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների մեծամասնությունը:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ պետք է նշվի նաև դրա կազմելու ամիս, ամսաթիվ, տարեթիվը և ժամանակը (ժամը և րոպեն): Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով: Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը գրանցում է գրանցամատյանում ելից փաստաթղթերի մասում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններում տեղ գտած տվյալներն ուղղել:

Եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության N3, N4, N5, N6 սյունակներում, ինչպես նաև թեկնածուներին տրված ձայների քանակի սյունակները լրացնելիս սխալ է թույլ տրվել, սխալն ուղղելու համար քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ համապատասխան տվյալների երկայնքով արվում է գրառում «Ուղղված է» և կազմվում է ուղղման արձանագրություն:

Ընտրական հանձնաժողովի քարտուղարը սխալն ուղղելու արձանագրությունը կազմում է հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, որում ներառում է հետևյալ տվյալները.

- ✔ ընտրատարածքի համարը և անվանումը,
- ✔ ընտրական տեղամասի համարը,
- ✔ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության համապատասխան սյունակի համարը, որում կատարվում է ուղղումը, թիվը, որը պետք է ուղղվի այս սյունակում և այն թիվը, որ պետք է գրված լինի դրա փոխարեն,
- ✔ թեկնածուի անունը և ազգանունը, որի երկայնքով տվյալներում ուղղումներ են կատարվում,
- ✔ թիվը, որը պետք է ուղղվի այս սյունակում և այն թիվը, որ պետք է գրված լինի դրա փոխարեն:

Ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները պարտավոր են ստորագրել ուղղման արձանագրությունը: Ուղղման արձանագրությունը կկնքվի ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով: Հանձնաժողովի քարտուղարը ուղղման արձանագրությունը գրանցում է գրանցամատյանի ելից փաստաթղթերի մասում և քվեարկության օրվա գործավարության մատյանում: Ուղղման արձանագրությունը կցվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը կապարակնքելուց և դրա վրա հանձնաժողովի բոլոր անդամների կողմից ստորագրություն անելուց հետո արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ուղղման արձանագրություն կազմել:

Եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս սխալ է թույլ տրվել հանձնաժողովի հատուկ կնիքի համարը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ամիս, ամսաթիվ, տարեթիվը/ժամանակը մուտքագրելիս, կամ չի կատարվել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության վավերացում հանձնաժողովի հատուկ կնիքով և նման ձևով տրամադրվել է դրա ֆոտոպատճենը, հանձնաժողովի քարտուղարը պետք է գրի բացատրագիր:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը փակցնել հրապարակային ծանոթացման համար: Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և ուղղման արձանագրության (այսպիսինի գոյության դեպքում) ֆոտոպատճենները, հանձնաժողովի անդամների՝ կցված տարբերվող կարծիքներով (այսպիսինի գոյության դեպքում), պահանջելու դեպքում, անհապաղորեն փոխանցում է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և անճշտություններն ուղղելու արձանագրության (այսպիսինի գոյության դեպքում) ֆոտոպատճենները պետք է վավերացվեն հանձնաժողովի կնիքով, ստացող անձը հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով ֆոտոպատճենները ստանալը հաստատում է քվեարկության օրվա գործավարության մատյանում ստորագրությամբ:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/անճշտություններն ուղղելու արձանագրության հետ կապված հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի գոյության դեպքում), պահանջի հիման վրա, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից հատկացվում են պահանջելուց հետո, 2-օրյա ժամկետում:

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ ՓԱԿԵԼԸ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆԻ ԿՆՔՈՒՄԸ, ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Բոլոր ընթացակարգերն ավարտելուց հետո, հանձնաժողովի գրանցամատյանը և գործավարության մատյանը փակվում են հանձնաժողովի քարտուղարի և նախագահի ստորագրություններով և վավերացվում տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով:



Հանձնաժողովը կապարակնքում է.

- ✔ քվեարկության օրվա գործավարության մատյանը և դրա հետ մեկտեղ. դիմումները / բողոքները (այսպիսինի գոյության դեպքում), ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից տպվածքները (հավաստումը, որ մինչև տուփերը կապարակնքելը ընտրողները չեն քվեարկել), ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից նախնական արդյունքների մասին քաղվածքը, ընտրողների ստուգման սարքից/սարքերից տպած մեկնարկային հաշվետվությունը/ հաշվետվությունները (հավաստումը, որ ընտրողների ստուգման սարքով/սարքերով տեղի չի ունեցել ոչ մի ընտրողի ստուգում) և ընտրողների ստուգման սարքից տպած վերջնական հաշվետվությունը,
- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը (հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքված փաթեթը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները):

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը և գրանցամատյանը չեն կնքվում:

Հանձնաժողովի իրավազոր անձինք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին են փոխանցում ընտրական պարագաները և ընտրական փաստաթղթերի տուփը / տոպրակը, որում զետեղված են կապարակնքված ընտրական փաստաթղթերը և դրանցից առանձին.

- ✔ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, անճշտություններն ուղղելու արձանագրությունը (այսպիսինի գոյության դեպքում) և տարբերվող կարծիքը (այսպիսինի գոյության դեպքում),
- ✔ գրանցամատյանը և տեղամասային հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի գոյության դեպքում),
- ✔ քվեարկության օրվա գործավարության մատյանի կապարակնքված ծրարը,
- ✔ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման լրացված ձևաթուղթը:

Ընտրական պարագաների և ընտրական փաստաթղթերի փոխանցման հետ կապված՝ կազմվում է հանձնման-ընդունման ակտ: Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են ընտրական փաստաթղթերը տրամադրող և ընդունող անձինք, որից հետո յուրաքանչյուրին փոխանցվում է տվյալ ակտի մեկական օրինակ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին, ընտրական փաստաթղթերի հետ մեկտեղ, պետք է փոխանցի.

- ✔ ստուգման սարքից/սարքերից տպված ընտրողների ստուգումը հավաստող կտրոնների զետեղման համար հատկացված կապարակնքված տուփը/տուփերը:
- ✔ ընտրողների ստուգման սարքը/սարքերը, ձայների էլեկտրոնային հաշվիչ սարքը/սարքերը:

ՄԱՍ IV

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ/ԲՈՂՈՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ I.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ/ԲՈՂՈՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը տեղամասային ընտրական հանձնաժողովում և դիտորդն իրավունք ունեն.

- ✔ դիմում/բողոք փոխանցել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի նախագահի տեղակալին կամ հանձնաժողովի քարտուղարին,
- ✔ քվեարկության օրը ընտրական ընթացակարգերի հետ կապված դժգոհությունները, բողոքները և դիտողությունները գրանցել քվեարկության օրվա գործավարության մատյանում (10-րդ և հաջորդ էջերում):

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Ոչ ոք իրավունք չունի խանգարել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձին քվեարկության օրվա գործավարության մատյանում գրանցել դժգոհություն, դիտողություն կամ բողոք:

Քվեարկության օրվա գործավարության մատյանում գրառում անող անձը պարտավոր է մատնանշել իր ազգանունը, անունը և հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականի):

Ընտրական տեղամասում քվեարկության ընթացակարգի խախտման մասին դիմումը/բողոքը պետք է կազմվի խախտումը նկատելուն պես, քվեարկության օրվա ժամը 06:45-ից մինչև քվեատուփը բացելը, իսկ դիմումը/բողոքը ձայները հաշվելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացակարգերի ժամանակ թույլ տրված խախտման մասին և քվեարկության արդյունքների վերանայման կամ անվավեր ճանաչելու պահանջով, պետք է կազմվի քվեատուփը բացելուց մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը դիմումը/բողոքը գրանցում է գրանցամատյանի մտից փաստաթղթերի մասում և գործավարության մատյանում և դիմումատուին/բողոքարկողին տեղեկանք է տրամադրում, որում նշվում է դիմումը/բողոքը ընդունելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ժամը և գրանցման համարը: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկանքը վավերացնում է ստորագրությամբ:

> ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ
> Եթե քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք խախտումներ են արձանագրել (հայտնաբերել), այս բողոքի գրանցման հետ կապված որոշումն ընդունում է հանձնաժողովը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՒՄ / ԲՈՂՈՔՆԵՐՈՒՄ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

(Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 2-ի Որոշում №8/2012)

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի նախագահի տեղակալը որոշում են դիմում/բողոք ներկայացնողի անճշտությունը և խելամիտ ժամկետ սահմանում՝ դրա լրացման համար, եթե դիմումը/բողոքը չի ներառում.

- ✔ դիմումը/բողոքը կազմելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը,
- ✔ դիմումատուի/բողոքողի անունը, ազգանունը և հաշվառման վայրը,
- ✔ ընտրական տեղամասի համարը,
- ✔ վկայի առկայության դեպքում՝ նրա անունը, ազգանունը և գրանցման վայրը:

Դիմումատուն/բողոքողն իրավունք ունի սահմանված ժամկետում լրացնել թերությունը համանման դիմում/բողոք ներկայացնելու միջոցով, կամ ներկայացնել նոր դիմում (որտեղ կնշվեն այն տվյալները, որոնց պատճառով սահմանվել էր նրա թերությունը): Հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում անում է «թերություն» գրառումը: Գրառման երկայնքով ստորագրում են դիմումը/բողոքը ներկայացնողը և հանձնաժողովի համապատասխան ղեկավար անձը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Թերությունը լրացնելու ժամկետը սահմանվում է կողմերի համաձայնության հիման վրա: Թերությունը լրացնելու ժամկետի վերաբերյալ կողմերի անհամաձայնության դեպքում, ժամկետը միանձնյա սահմանում է դիմումը/բողոքը ընդունող անձը:

Թերությունը լրացնելու դեպքում, հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի նախագահի տեղակալը գրանցամատյանում գրում է «լրացված է» և նշում թերությունը լրացնելու ճշգրիտ ժամանակը և ամիսը, ամսաթիվը, տարեթիվը: Գրառման երկայնքով ստորագրում են դիմում/բողոք ներկայացնողը և հանձնաժողովի համապատասխան ղեկավար անձը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Սահմանված ժամկետում թերությունը չլրացնելու դեպքում, դիմումը/բողոքը չի քննարկվում:

ԳԼՈՒԽ II.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ/ԲՈՂՈՔՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը/հանձնաժողովը պարտավոր է անհապաղորեն համապատասխանաբար արձագանքել և վերացնել առկա խախտումը: Դիմումի/բողոքի մեջ նշված խախտումը վերացնելու դեպքում քվեարկության օրվա գործավարության մատյանում հանձնաժողովի քարտուղարը գրում է «խախտումը վերացվել է» և նշում ճշգրիտ ժամանակը:

Այն դեպքում, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը/հանձնաժողովը չի վերացրել խախտումը կամ այլ կերպ մերժել է արձագանքել դիմումին/բողոքին, դիտորդը/ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը կամ նույն դիտորդական կազմակերպության այլ դիտորդ/ընտրական սուբյեկտի այլ ներկայացուցիչ իրավունք ունի ընտրական տեղամասը բացվելուց (ժամը 06:45-ից) մինչև հիմնական քվեատուփի բացվելը բացահայտված խախտումները անհապաղորեն բողոքարկել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում (ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ խախտումը վերացնելու համար):

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը/ հանձնաժողովը չի վերացրել խախտումը կամ որևէ այլ ձևով հրաժարվել է արձագանքել դիմումին/բողոքին, որը վերաբերում է ձայները հաշվելուն և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգերի ժամանակ կատարված խախտումներին, դիտորդը/ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը կամ նույն դիտորդական կազմակերպության այլ դիտորդ/ընտրական սուբյեկտի այլ ներկայացուցիչ իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի/տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի գործողությունը 3 օրացուցային օրվա ժամկետում բողոքարկել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում (ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը դիմումը/բողոքը քննարկում է այն ստանալուց հետո, 4-օրյա ժամկետում):

Տեղամասային ընտրական հանձնաժողովը ներկայացված դիմումը/բողոքը չի քննարկում և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կարգադրություն է հրապարակում դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու վերաբերյալ, եթե.

- ✔ դիմումը/բողոքը կազմված է ոչ իրավազոր անձի կողմից,
- ✔ դիմումի/բողոքի մեջ չի նշված խախտման էությունը և այն կատարելու ժամանակը,
- ✔ դիմումը/բողոքը ընտրական հանձնաժողովին է փոխանցվել օրենքով պահանջված ժամկետի և կարգի խախտմամբ,
- ✔ սահմանված ժամկետում չի լրացվել ներկայացված դիմումի/բողոքի թերությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ №1

№ «.....».....ընտրատարածք

№ «.....»..... տեղամասային ընտրական հանձնաժողով

ՏԵՂԵԿԱՆՔ

տեղամասային ընտրական հանձնաժողովում դիմումը/բողոքը գրանցելու վերաբերյալ

Դիմումը/բողոքը ընդունելու ամսաթիվ, ամիս, տարեթիվ. .....

Դիմումը/բողոքը ընդունելու ժամանակը. .....

Դիմումի/բողոքի գրանցման համարը. .....

Հանձնաժողովի քարտուղար/հանձնաժողովի իրավազոր անձ՝ .....

/ստորագրություն/

ՀԱՎԵԼՎԱԾ №2

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ/ԲՈՂՈՔԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դիմումի/բողոքի մեջ նշվում է.

- ✔ դիմումը/բողոքը կազմելու ամսաթիվ, ամիսը, տարեթիվը և ժամանակը*,
- ✔ դիմումատուի/բողոքողի անունը, ազգանունը և հաշվառման վայրը*,
- ✔ ընտրական տեղամասի համարը*,
- ✔ վկայի առկայության դեպքում՝ նրա անունը, ազգանունը և հաշվառման վայրը*,
- ✔ խախտման էությունը և այն թույլ տալու ժամանակը**,
- ✔ խախտողին որոշելու դեպքում՝ նրա այն տվյալները, որոնք հնարավոր դարձան որոշել**,
- ✔ խախտողի բացատրագիրը (այսպիսինի գոյության դեպքում)**,
- ✔ դիմումատուի/բողոքողի կոնտակտային հեռախոսի (բնակման վայրի կամ/և բջջայինի) համարը***,
- ✔ դիմումատուի/բողոքողի ֆաքսի համարը և էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում)***[2],
- ✔ այլ լրացուցիչ տեղեկություններ:

* Տվյալ ռեկվիզիտների ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք մատնանշումը դիմումի/բողոքի մասին թերության սահմանման հիմունք է, իսկ թերությունը չուղղելու դեպքում՝ այն առանց քննարկման թողնելու հիմունք:

** Տվյալ ռեկվիզիտները չնշելը, առանց թերությունը որոշելու՝ դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու հիմունք է:

*** Տվյալ ռեկվիզիտների ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք մատնանշումը չի կարող դառնալ դիմումի/բողոքի թերությունը որոշելու և այն առանց քննարկման թողնելու հիմունք, սակայն կարող է դառնալ կողմին՝ բողոքի քննարկման հրավիրելու անհնարինության հիմունք: